


EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ

Թիվ 152

ՄԱՅԻՍ 2012



COUNCIL
OF EUROPE
CONSEIL
DE L'EUROPE

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾ 2

Դրական պարտավորություններ

Կյանքի իրավունք

Ուժի գործադրում

Արդյունավետ դատաքննություն

2004 թվականին Բեսլանում անձանց գերի վերցնելու ժամանակ Պետության կողմից անձանց կյանքի պաշտպանության դրական պարտավորության ենթադրյալ խախտում՝ գործի վերաբերյալ հաղորդումն ուղարկված է

Tagayeva and Others v. Russia - 26562/07 և այլն

Ուժի գործադրումը

Զինակոչիկը սպանվել է կրակոցից՝ կարգապահական իրավախախտման համար նշանակված կալանաքից փախուստի փորձ անելիս՝ խախտում

Putintseva v. Russia - 33498/04

ՀՈԴՎԱԾ 3

Անմարդկային վերաբերմունք

Նվաստացնող վերաբերմունք

Բանտարկյալին ինը ժամ շարունակ զսպածության մահճակալին գամելը՝ խախտում

Julin v. Estonia - 16563/08 և այլն

Վտարում

Ապաստան տրամադրելու վերաբերյալ մերժումը իրանական

ընդդիմադիրներին/այլախոհներին, ով իրանի ռեժիմի դեմ ակտիվորեն և բացահայտորեն քարոզարշավ են անցկացրել պատասխանող պետություն իրենց ժամանումից հետո՝ վրարումը կառաջացներ խախտում

S.F. and Others v. Sweden - 52077/10

ՀՈԴՎԱԾ 6

Հոդված 6§1 (քաղաքացիական)

Արդար դատաքննություն

Բարձր դատարանի կողմից կարճ ժամանակահատվածում վերջնական վճռի ընդունումը մինչև նախադեպային իրավունքում հակասության հարցի լուծումը՝

չկա խախտում


Albu and Others v. Romania- 34796/09 և այլն

Հոդված 6 § 1 (քրեական)

Դատավարության կողմերի իրավահավասարությունը

Դատական նիստերի դահլիճում հանրային դատախազի ավելի բարձր դիրքը՝ անընդունելի

Diriç v. Turkey - 38560/04



Ողջամիտ ժամկետ

Դիմումատուի առողջական վիճակի պատճառով մոտ քսանիխնգ տարի տևող քրեական վարույթ՝ անընդունելի

Krakolinig v. Austria (dec.) - 33992/07

ՀՈԴՎԱԾ 8

Դրական պարտավորություններ

Ընտանեկան կյանքը հարգելու իրավունք

Առևանգված երեխայի կենսաբանական հոր խնամակալությունը նշանակող դատարանի հրամանը կատարելու ներպետական իշխանությունների անփութությունը՝ խախտում

Santos Nunes v. Portugal - 61173/08

Անձնական կյանքը հարգելու իրավունքը

Կաթոլիկ կրոնի և էթիկայի ռասուցի պայմանագիրը նորից կնքելու մերժումը նրա կողմից «ամուսնացած հոգուրական» լինելու հանգամանքը հրապարականորեն բացահայտելուց հետո՝ խախտում չկա:

Fernandez Martinez v. Spain - 56030/07

Ոստիկանության՝ քաղաքի կենտրոնական թաղամասերում անձանց կանգնեցնելու և խուզարկելու լիազորությունները անվտանգության տեսանկյունից վտանգավոր, այն է՝ բռնության գործադրմամբ կատարվող հանցագործությունների տարածման հանգամանքից ելնելով՝ անընդունելի:

Colon v. the Netherlands (dec.) - 49458/06

ՀՈԴՎԱԾ 10

Դրական պարտավորություններ

Լրագրողների համար ռադիոկայանի մատչելիությունը հաստատող դատարանի հրամանի կատարման համար իշխանությունների կողմից բավարար միջոցների ծեռնարկման ձախողումը՝ խախտում

Frăsilă and Ciocorlan v. Romania - 25329/03

ՀՈԴՎԱԾ 14

Խտրականություն (Թիվ 1 Արձանագրության 3-րդ հոդված)

Քաղաքական կուսակցության ֆինանսական աջակցության մերժումը այն հիմքով, որ այն չի հավաքել օրենքով սահմանված օգնության իրավունք ստանալու ձայների նվազագույն քանաքը (7 տոկոս)՝ խախտում չկա


Ozgurluk ve Danisima Partisi (ODP) v. Turkey - 7819/03

ՀՈԴՎԱԾ 34

Միջնորդագիր ներկայացնելու իրավունքի իրականացմանը խոչընդոտելը

Դատարանի կողմից նշանակված ժամանակավոր միջոցներին չհամապատասխանելը՝ խոշտանգման իրական վտանգը հաշվի առնելով. խախտում

Labsi v. Slovakia - 33809/08



ՀՈԴՎԱԾ 35

Հոդված 35Տ1

Ներպետական իրավական պաշտպանության միջոցների սպառում

Դիմումի քննության անհնարինությունը դատավարական նորմի առանձնապես հստակ մեկնաբանման պատճառով՝ նախնական առարկությունը մերժվել է՝ ընդունելի է

UTE Saur Vallnet v. Andorra - 16047/10

Ներպետական իրավական պաշտպանության միջոցների սպառում

Արդյունավետ ներպետական իրավական պաշտպանության միջոց. Գերմանիա

Զգձգված դատաքննության և քրեական հետախուզության մասին ակտի վերաբերյալ՝ արդյունավետ ներպետական իրավական պաշտպանության միջոց

Taron v. Germany (dec.) - 53126/07

Վեցամյա ժամկետ

Վեցամյա ժամկետից ենելով իրար չհաջորդող մինչդատական կալանքի ժամկետների հանդեպ առանձնացված մոտեցում

Idalov v. Russia [GC] - 5826/03

Ներկայացուցի լիազորագիրը ներկայացնելու համար Դատարանի կողմից սահմանված ժամկետները դիմումատուի կողմից չպահպանելը՝ անընդունելի է

Kaur v. the Netherlands (որոշում) - 35864/11

3-րդ հոդվածի ներքո արտաքսման գործերով վեցամյա ժամկետի հաշվարկման սկիզբը
P.Z. and Others v. Sweden (որոշում) - 68194/10

ՀՈԴՎԱԾ 46

Ընդհանուր միջոցառումներ

Պատասխանող Պետությունից պահանջվում է անհապաղ բարեփոխումներ իրականացնել, որպեսզի վերացնի ոստիկանության կողմից ցուցաբերած վատ վերաբերմունքը և երաշխավորի ոստիկանության կողին վերաբերմունքի մասին գանգատների արդյունավետ հետաքննությունը:

Kaverzin v. Ukraine - 23893/03

ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾ

Պողիտիվ պարտավորություններ


Ուժեղ անձրևից հետո առաջացած ջրհեղեղից սեփականությանը պատճառված վնաս՝ անընդունելի

Hadzhiyska v. Bulgaria (dec.) - 20701/09

Գույքը

Գումարի վերադարձ, որը առանց որևէ թույլտվության դեպոզիտացվել է Մոզամբիկի անկախության առթիվ պորտուգալական հյուպատոսարանում ինֆլացիայի կամ դրամի արժեզրկման պատճառով՝ խախտում չկա:

Flores Cardoso v. Portugal - 2489/09



ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ Յ-ՐԴ ՀՈՂՎԱԾ

Քվեարկություն


Բանտարկյալների ընտրելու իրավունքի արգելում, որը ազատազրկման արդյունք է՝ խախտում չկա

Scoppola v. Italy (no. 3) [ՄՊ] - 126/05

ԴԱՏԱՐԱՆԻ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եվրոպական նախադեպի մասին ծեռնարկ, որին բնարկվում են ապաստանի, գաղթի և սահմանի վերահսկման վերաբերյալ գործեր

ՄԻՀՀ նախագիծ «Կոնվենցիայի չափանիշները մուտքեցնել դրանք. համապատասխան լեզուներով ՄԻԵԴ կարևոր նախադեպի թարգմանություն և դրանքում»



ՀՈԴՎԱԾ 2

Դրական պարտավորություններ
Կյանքի իրավունք
Ուժի գործադրում
Արդյունավետ դատաքննություն

2004 թվականին Բեսլանում անձանց գերի վերցնելու ժամանակ Պետության կողմից անձանց կյանքի պաշտպանության դրական պարտավորության ենթադրյալ խախտում՝ գործի վերաբերյալ հաղորդումն ուղարկված է

Tagayeva and Others v. Russia

Գանգատ թիվ 26562/07 և այլն
[Բաժանմունք I]

Գործը վերաբերում է Հյուսիսային Օսեթիայում /Ռուսաստան/ մի դպրոցում տեղի ունեցած ահաբեկչական գործողության մասին, որտեղ գերի էր վերցվել 334 քաղաքացի, որոնցից 186-ը երեխաներ էին: 2004թ.-ի սեպտեմբերի 1-ին, ժամը 9-ից քիչ անց, մի խումբ զինված ահաբեկիչներ մտել են դպրոցի բակ, որտեղ այդ պահին տեղի է ունեցել ուսումնական նոր տարվա սկիզբը նշելու ավանդական արարողությունը: Նրանք 1100 մարդու ստիպել են մտնել դպրոցի շենք, որում տեղադրված են եղել մեծ քանակով պայթուցիկներ: Նոյն օրը, մոտավորապես տասնվեց պատանդ վերցված անձ սպանվել է: Սեպտեմբերի 3-ին երեք պայթուցիկների պայթունից ավիրվել է դպրոցի շենքը՝ թռողներով բազմաթիվ զոհեր: Պայթունների բնույթը և ծագումը վիճարկվել են: Ժամանակին քննիչների կողմից արված մի շարք ուսումնասիրություններ ցույց են տվել, որ այդ ամենը ահաբեկիչների կողմից տեղադրված պայթուցիկների հետևանքով է եղել: Դիմումատունները իրենց հերթին հենվել

են Հյուսիսային Օսեթիայի Պառամենտի կողմից և Պետումայի պատգամավոր Մ. Սահիեվի պատվիրած հաշվետվության տվյալների վրա, ըստ որոնց առաջին երկու պայթունները իրականացվել են արտաքին այլ աղբյուրների կողմից:

Եվրոպական դատարան ներկայացրած գանգատում դիմումատունները մասնավորապես ենթադրել են, որ դպրոցում սպանվածների մահվան պատճառները իշխանական ուժերի ոչ ճիշտ տեղաբաշխումը, ահաբեկիչների հետ գերիներին առանց բռնության ազատ արձակման համար չբանակցելը, տուժողներին համապատասխան օգնության տրամադրման ծրագիր չունենալը, իրդեհում մարդկային զոհերից խուսափելու համար բավարար միջոցներ չտրամադրելն է եղել: Նրանք բոլորել են նաև փաստերի ոչ արդյունավետ քննության դեմ:

Հաղորդումը Կոնվենցիայի 2-րդ, 3-րդ, 6-րդ, 8-րդ, 10-րդ և 13-րդ հոդվածների ներքո է:

Ուժի գործադրումը

Զինակոչիկը սպանվել է կրակոցից՝ կարգապահական իրավախախտման համար նշանակված կալանաքից փախուստի փորձ անելիս՝ խախորում

Putintseva v. Russia

Գանգատ թիվ 33498/04
Վճիռ 10.5.2012 [I բաժանմունք]

Փաստերը: Դիմումատուի որդուն կրակել և սպանել էին փախուստի փորձի ժամանակ, երբ նրան ուղեկցում էին կալանավայր պարտադիր զինվորական ծառայության ժամանակ առանց թույլտվության

բացակայելու համար նշանակված տասնօրյա կարգապահական պատիժը կրելու համար: Նրան սպանած սերժանտին, ում հետ դիմումատուի որդին դեպքից քիչ առաջ վեճ էր ունեցել, ոչ մի մեղադրանք չէր ներկայացվել այն հիմքով, որ նա հետևել էր հրազենի օգտագործումը կարգավորող կանոններին՝ կալանավորվածի փախուստը կանխելու նպատակով:

Օրենքը: 2-րդ հոդված:

(ա) **Նյութաիրավական կողմը - Ներպետական իշխանությունների կողմից ձեռք բերված փաստերը չէին ներառել փախչող գինվորի դեմ ուժի կիրառման համար հանգամանքները սահմանող օրենսդրության սահմանափակումների գնահատումը:** Հարցը, թե արդյոք փաստերի ուսումնասիրության հետևանքով հաստատվել էր 2-րդ հոդվածի խախտում տարբերվում էր այն հարցից, թե արդյոք սերժանտը ենթակա էր քրեական պատասխանատվությանը: Ներպետական իշխանությունների կողմից կիրառված չափորոշիչը եղել այն, թեարդյոք մահացու ուժի կիրառումը օրինական էր, կժծուի այն, թե արդյոք դա «խիստ անհրաժետ էր» 2§2 հոդվածի ներքո: Փախուստի դիմած անձին կրակելը ներպետական համապատասխան օրենքի ներքո օրինական էր, նոյնիսկ մանր կարգապահական իրավախախտման համար դատապարտվածին, ով ի պատասխան բանավոր նախազգուշացմանը կամ օդ նախազգուշացնող կրակոցի արձակմանը անմիջապես չէր հանձվել: Նման օրենսդրական սահմանափակումը հիմնովին չէր համապատասխանում պահանջներին և նվազեցրել էր կյանքի իրավունքի «օրենքով» պաշտպանության աստիճանը, քանի որ այն համաշափության պահանջին տեղ չի տալիս և

չի պարունակում որևէ այլ երաշխիքներ կամայական կյանքից զրկելու համար: Հետևաբար, պատասխանող պետության կողմից ընդհանուր բնույթի ձախողում էր այն, որ 2-րդ հոդվածի ներքո նա չէր կատարել իր պարտավորությունը, որը կայանում էր կյանքի իրավունքի պաշտպանման մեջ՝ համապատասխան օրենսդրական և վարչական սահմանափակումներ նախատեսելով փախուստի դիմած գինվորների դեմ գինվորական ժամապահերի կողմից ուժի և հրազենի կիրառման վերաբերյալ: Ինչ վերաբերում է ուժի իրական կիրառմանը և դեպքին նախորդող իշխանությունների վարքագծին, դիմումատուի որդին գինված չէր և նրա ուղեկցորդներին կամ երրորդ անձանց համար վտանգ չէր ներկայացնում: Այս հանգամանքներում ցանկացած հնարավոր մահացու ուժի կիրառման դիմելը արգելված են 2-րդ հոդվածով՝ անկախ վտանգից, որ նա կարող էր փախչել: Դեռ ավելին, պարզվեց, որ առկա էին նրա փախուստը կանխելու այլ միջոցներ: Նրա վարքագիծը՝ հավանաբար, կանխատեսելի էր, քանի որ նրան հեշտությամբ էին վնասազերծել նախորդ պատահարի ծամանակ, և հրամանատարները տեղյակ էին, որ նա հոգեբանական խնդիրներ ուներ իր կյանքը բանակում կարգավորելու հարցում և հավանական է, որ նա կփորձի դիմել փախուստի: Սակայն բացակայում էր որևէ նշան, որ նրա ուղղությամբ կրակած սերժանտը ստացել էր նման հանգամանքներում անհրաժեշտ ուժի չափի մասին հստակ կարգադրություններ կամ դեկավարվել էր կյանքի կորստի վտանգը նվազագույնի հասցնելու մասին կարգադրություններով: Հարց էր



առաջացնում այն, որ նոյն սերժանտին, ում հետ դիմումատով որդին կովել էր կրակոցից քիչ առաջ, հանձնարարվել էր նրան ուղեկցել: Ուղեկցումն անկազմակերպ էր, և նրան ուղեկցելու մասին սերժանտին հրահանգելու վերաբերյալ հրամանատարի որոշումը ուշադրության անհրաժեշտ աստիճանի չէր: Այսպիսով, իշխանությունները նվազագույն աստիճանի չեն հասցրել մահացու ուժի հնարավոր օգնության դիմելը և դիմումատուի որդու կյանքին սպառնացող ցանկացած վտանգը:

Ընդհանուր առմամբ, ուժի կիրառման վերաբերյալ համապատասխան օրենսդրության սահմանափակումը հիմնովին անբարար էր և դիմումատով որդին սպանվել էր այն հանգամանքներում, որում նրա փախուատը կանխելու համար հրազենի օգտագործումը անհամատեղելի էր 2-րդ հոդվածի հետ:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

(բ) Դադավարական կողմը - Հետաքննությունը անկախ էր և կատարվել էր բավարար արագությամբ:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

41-րդ հոդված: 45,000 եվրո որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

ՀՈԴՎԱԾ 3

**Անմարդկային վերաբերմունք
Նվաստացնող վերաբերմունք
Բանտարկյալին ինը ժամ շարունակ
զսպվածության մահճակալին գամելը՝
խախտում**


Julin v. Estonia

Գանգատ թիվ 16563/08 և այլ
Վճիռ 29.5.2012 [I Բաժանմունք]

Փաստերը: Դատապարտված բանտարկյալ դիմումատուին մոտ ինը ժամով գամել են զսպվածության մահճակալին բանտի սպաների հետ միջադեպից հետո, որտեղ նա ենթադրաբար դարձել էր ագրեսիվ այն բանից հետո, եթե նրան արգելել էին ծխախոտ տանել պատժախուց: Միջադեպի մասին արձանագրության մեջ ամրագրվել է, որ նա սպառնացել է, հայոյել, հեռավորությունից խփել դրանք, հարվածել է բանտի սպայի ծեռքին և հրաժարվել ենթարկվել օրինական հրամաններին: Իր վիճակը յուրաքանչյուր ժամ վերահսկվել է՝ իր պահվածքի հիման վրա իր շարունակական զսպվածության նշանակման անհրաժեշտությունից ելնելով:

Օրենքը: 3-րդ հոդված (զսպվածության մահճակալին գամելը): Քանի դեռ զսպվածության մահճակալի մեջ տեղադրումը անպայման չէ, որ բարձրացնի 3-րդ հոդվածի ներքո խնդիր, սակայն դրա հետևանքով վատ վերաբերմունքի վտանգի առաջ գալու տեսանկյունից, դրա կիրառումը պետք է մանրակրկիտ քննվեր Դատարանի կողմից և՝ դրա օրինականության, և՝ հիմնավորվածության ու կիրառման մեթոդի առումով:

Ինչ վերաբերում է այդպիսի սահմանափակող միջոցների կիրառման օրինականությանը, հիմնավորվածությանը, պայմաններին և ընթացակարգին, ապա դրանք պետք է սահմանվեն առավելագույն ճշգրտությամբ: Ներպետական կանոնները, սակայն, բավականին մակերեսային և ընդհանուր են



Եղել, և, ինչպես վերջերս Էստոնիայի Գերագոյն դատարանն էր գտել, նաև մանրամասների պակաս է եղել: Այնուամենայնիվ, դիմումատուի գործով իշխանությունների գործելակերպը գործնականում տվել է նրան որոշ լրացուցիչ երաշխիքներ՝ նրա վիճակը ժամը մեկ վերահսկվել է, և նրան երկու անգամ այցելել է բժշկական անձնակազմը, որի դիտարկումները արձանագրվել են գեկուցում: Ինչ վերաբերում է միջոցի կիրառման ձևին և իհմնավորվածությանը, Դատարանը նշել է, որ բժշկական ստուգումներ իրականացվել են միայն ազատազրկման սկզբում և վերջում՝ դրանց միջև ութժամյա ընդմիջումով, որի ժամանակ դիմումատուին որևէ բժշկական անձնակազմ չի այցելել: Դատարանը կրկնել է, որ զսպումը երբեմն չպետք է օգտագործվի որպես պատժամիջոց, այլ պետք է օգտագործվի միայն ինքն իրեն վնաս պատճառելու, կամ մյուսներին կամ բանտի անվտանգությանը լուրջ վտանգ սպառնալուց խուսափելու համար կիրառվող միջոց: Քանի որ դիմումատուի պահվածքը եղել է ագրեսիվ և անհանգստացնող, կասկածելի էր, որ իր բանտախցում միակը լինելով հանդերձ նա ներկայացրել է բավարար վտանգ իր կամ մյուսների համար՝ այսպիսի խիստ միջոցառումները արդարացնելու համար, և չի եղել որևէ նշում այն մասին, որ իշխանությունները դիտարկել են այլնտրանքային միջոցների կիրառումը: Առավել կարևոր է, որ նոյնիսկ եթե դիմումատուի ազատության սկզբնական սահմանափակումը արդարացված է եղել, Դատարանը չի համոզվել, որ իրավիճակի այդ լրջությունը պահպանվել է մոտ ինը ժամ: Զսպվածության մահճակալի մեջ գամելը առանց բժշկական իհմնավոր պատճառների,

որոնք ցույց չեն տրվել, հազվադեպ կպահանջվեր ավելի քան մի քանի ժամ: Այնուամենայնիվ, վեցժամյա գամելուց (և նորից յոթժամյա) հետո, իշխանությունները որոշել են շարունակել զսպվածությունը այն հիմքով, որ դիմումատուի «պահվածքը» «աննորմալ» է եղել, չնայած և նա «լուս» է եղել: Այս պատճառները ամբողջովին անբավարար էին այսպիսի երկար ժամանակով զսպվածության միջոցը երկարաձգելու համար: Տևական անշարժ դիրքում պահելու հետևանքով առաջացրած տառապանքը և ֆիզիկական անհարմարությունը դիմումատուին պատճառել է 3-րդ հոդվածով երաշխավորված իրավունքներին անհամապատասխան վատ և նվաստացուցիչ վերաբերմունք:


Եզրակացություն՝ խախտում(միաձայն):

Դատարանը վեց ձայնը մեկի դեմ հարաբերակցությամբ նաև գտել է, որ տեղի չի ունեցել 3-րդ հոդվածի խախտում մեկուսացման միջադեպից հետո ուժի և ձեռնաշղթաների կիրառմամբ և, միաձայն, 3-րդ հոդվածի խախտում՝ վատ վերաբերմունքի մասին դիմումատու պնդումների առթիվ հետաքանության արդյունավետության վերաբերյալ: Այնուհետև, Դատարանը միաձայն հաստատել է դատարանի մատչելիության իրավունքի խախտման առթիվ իր ներկայացված երկու գանգատներից մեկի խախտում (6-րդ հոդվածի 1-ին մաս):

Հոդված 41՝ 10,000 եվրո որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

Վտարում

**Ապաստան տրամադրելու վերաբերյալ
մերժումը իրանական
ընդունմադիրներին/այլախոհներին, ով**



**Իրանի ռեժիմի դեմ ակտիվորեն և
բացահայտորեն քարոզարշավ են
անցկացրել պատասխանող պետություն
իրենց ժամանումից հետո՝ վրարումը
կառաջացներ խախտում**

S.F. and Others v. Sweden

Գանգատ թիվ 52077/10
Վճիռ 15.5.2012 [Վ բաժանմունք]

Փաստեր: 2007թ-ին առաջին երկու դիմումատունները՝ քրդական և պարսկական ծագում ունեցող ամուսնացած գույգը, իրենց հայրենի իրանը լրելուց հետո ապաստան են խնդրել Շվեդիայում: Նրանք հայտարարել են, որ իրենց քաղաքական գործունեությունը և իրանական ռեժիմի ընդդիմություն հանդիսանալը նշանակում է, որ եթե իրենք վերադառնան Իրան, իրենց կյանքը վտանգի տակ կլինի: Առաջին դիմումատուն քրդերի օգտին էր քարոզարշավ անցկացրել և 2003թ-ին իրանում մի ամիս բանտում էր անցկացրել իր գործունեության համար: Իրենց ժամանումից ի վեր, առաջին և երկրորդ դիմումատունները քաղաքականորեն ակտիվ են եղել՝ ներկայանալով իրանական Քուրդիստանի ժողովրդավարական Կուսակցության (ԻՔԾԿ) նիստերին և մասնակցելով իրանում արգելված արբանյակային ալիքներով հեռարձակվող լրատվական հաղորդումներին: Երկրորդ դիմումատուն քրդական հեռուստաալիքի համար էր աշխատում, որը բննադատորեն էր վերաբերվել իրանական ռեժիմին: Իրենց ապաստան ստանալու վերաբերյալ պահանջները մերժվել են շվեդական միգրացիայի վարչության և դատարանների կողմից, որոնք գտել են, որ մինչդեռ նրանց պատմությունը հավանական էր թվացել,

սակայն քիչ հավանական է, որ իրանական հշխանությունները կիետապնդեին նրանց՝ հաշվի առնելով իրենց ցածր դասակարգումը որպես քրդերի իրավունքների ակտիվիստներ:

Օրենքը: Յ-րդ հոդված: Իրանում մարդու իրավունքների իրավական կարգավիճակը լուրջ անհանգստություն է առաջացրել: Մի շաբթ միջազգային աղբյուրներից ստացված տեղեկության համաձայն, որ իրանական հշխանությունները հաճախ կալանավորել են և վատ վերաբերմունքի են ենթարկել անձանց, ովքեր խաղաղ մասնակցել են երկրում անցկացվող ընդդիմության կամ մարդու իրավունքների վերաբերող միջոցառումներին՝ ցանկացածը, ով ցուցին մասնակցել է կամ որևէ կերպ ընդդիմացել է ռեժիմին, կալանավորվելու և վատ վերաբերվելու կամ խոշտանգվելու վտանգի տակ է եղել: Սակայն, իրանում մարդու իրավունքների լուրջ խախտումների մասին գեկուցները այնպիսի բնույթի չեն, որպեսզի հիմնավորվեր, որ այնտեղ կարող է խախտվել կոնվենցիան, եթե դիմումատուններին վտարեն իրան:

Անդրադառնալով դիմումատունների անձնական վիճակին Դատարանը նշել է, որ իրանում առաջին դիմումատուն ԻՔԾԿ-ի սատարողն է եղել միայն քաղաքական թույլ ազդեցությամբ և որ զգայի ժամանակ է անցել իր 2003-ի կալանքից հետո: Նա հնարավորություն ունեցել է բանտում նստելուց հետո աշխատել և բնականոն կյանքով ապրել, և չի եղել որևէ հետագա հսկողություն իրանական հշխանությունների կողմից: Այս հանգամանքները բավարար չեն եղել եզրակացնելու, որ դիմումատունները արգելված վերաբերմունքի վտանգի տակ կինեին վտարման դեպքում: Սակայն,



դիմումատուները ներգրավված են եղել մեծ և անկեղծ քաղաքական և մարդու իրավունքների վերաբերող գործունեության և դեպքերի մեջ Շվեդիայից իրենց ժամանումից հետո՝ հայտնվելով մի քանի համացանցային կայքերում և հեռուստահաղորդումներում և գլխավոր դեր խաղալով իրանում բարձրացող մարդու իրավունքներին վերաբերող հարցերում և քննադատելով ոեժիմը: Երկրորդ դիմումատուն քուրդ բանտարկյալների անունից և իրանում մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ քարոզարշավ անցկացնող եվրոպական հանձնաժողովի միջազգային ներկայացուցիչն է եղել: Այս գործունեությունը դիմումատուներին վտանգի տակ է դրել, քանի որ Դատարանի տրամադրության տակ գտնվող տեղեկատվությունը հաստատել է այն, որ իրանական իշխանությունները վերահսկել են համացանցային հաղորդակցությունը և ոեժիմի քննադատումները իրանում և իրանից դուրս և զննել են վերադարձող քաղաքացիներին: Այս համատեքստում, 2003թ-ին առաջին դիմումատուի ծերբակալումը և նրա կենսագրությունը, որպես երաժիշտ և հայտնի մարզիկ նույնպես մեծացրել է իրեն ճանաչելու վտանգը: Ի լրում՝ դիմումատուները ենթադրաբար ապօրինի են լրել իրանը և չեն ունեցել ելքի օրինական փաստաթղթեր: Ի վերջո, այն փաստը, որ դիմումատուները ունեցել են քրդական և պարսկական արմատներ, սոցիալապես ակտիվ են եղել և կիրթ, նույնպես հնարավոր վտանգի գործոններ են հանդիսացել: Այսպիսով առկա են եղել լուրջ հիմքեր կարծելու, որ դիմումատուները վատ վերաբերմունքի իրական վտանգի կարող էին ենթարկվել, եթե նրանց վտարեին իրան:

Եզրակացություն՝ վտարումը խախտում կառաջացներ (միաձայն):

ՀՈԴՎԱԾ 6

Հոդված 6Տ1 (քաղաքացիական)

Արդար դատաքննություն

Բարձր դատարանի կողմից կարձամանակահատվածում վերջնական վճռի ընդունումը մինչև նախադեպային իրավունքում հակասության հարցի լուծումը՝ չկա խախտում

Albu and Others v. Romania

Գանգապ 34796/09

Վերջնական վճիռ 10.5.2012 [III Բաժանմունք]

Փաստերը:

Դիմումատուները քաղաքացիական ծառայողներ են: Նրանք նպաստի վճարման վարույթ էին հարուցել իրենց գործատուի դեմ, սակայն նրանց բոլորները մերժվել են: Նրանց գործով վերջնական վճիռը կայացվել էր վերաբնիչ դատարանի կողմից 2009թ. հունվարին: 2008 թվականից ի վեր բազմաթիվ մարդկանց շահերին վնասող՝ իրար հակասող որոշումներ են ընդունվել ներպետական դատարանների կողմից խնդրո առարկա հանդիսացող նպաստների վճարման առնչությամբ: 2009թ. սեպտեմբերին, գլխավոր դատախազի դիմումով Վճռաբեկ և Արդարադատության Բարձր Դատարանը սահմանել են պարտադիր դեկավար ցուցումներ խնդրո առարկա իրավական դրույթների միատեսակ մեկնաբանության համար:

Օրենքը: Հոդված 6: Դիմումատուները ունեցել են մրցակցային դատավարություն և



Կարողացել են ներկայացնել ապացույցներ և ազատորեն ձևակերպել իրենց գործը: Նրանց փաստարկները պատշաճ կերպով քննվել են ներպետական դատարանների կողմից: Համապատասխան օրենքի մասին դատարանների եզրահանգումներին և մեկնաբանություններին չի կարելի վերաբերել որպես ակնհայտորեն կամայական կամ անհիմն: Բացի այդ, Քաղաքացիական դատավարության օրենսգրքում ամրագրված ընթացակարգը նախատեսված էր դատարանի իրար հակասող որոշումները լուծելու, այլ ոչ թե խոչնընդոտելու համար, և այն ապացուցել է իր արդյունավետությունը, քանի որ այն համեմատաբար արագ ամրագրվել էր Գլխավոր դատախազի կողմից իր միջնորդության մեջ և վերջ էր դրել նախադեպային իրավունքի միջև անհամապատասխանությանը բավականին կարճ ժամկետում: Մինչդեռ Վճռաբեկ և Արդարադատության Բարձր Դատարանի առջև բերված դիմումատունների բողոքները մերժող վճռով այն կարող էր տալ խնդրո առարկա իրավական տեքստերի միատեսակ մեկնաբանություն, դիմումատունների գործով ներպետական դատարանների կողմից ընդունված մոտեցումը նման էր Բարձր Դատարանի կողմից որդեգրած մոտեցմանը: Այսպիսով, չնայած վիճարկվող դատավճիռը կայացվել էր այն ժամանակ, երբ հակասությունը դեռևս առկա էր, այնուամենայնիվ իրավական որոշակիության սկզբունքի խախտում առկա չէր:

Եզրակացություն՝ չկա խախտում (միաձայն):

Հոդված 6 § 1 (քրեական)

Դատավարության կողմերի
իրավահավասարությունը

**Դատական նիստերի դահլիճում հանրային
դատախազի ավելի բարձր դիրքը՝
անընդունելի**

Diriçz v. Turkey


Գանգատ թիվ 38560/04
Վճիռ 31.5.2012 [II Բաժանմունք]

Փասփերը: 2003 թվականին դիմումատուն դատապարտվել է ազատազրկման սպանության, սպանության փորձի և հրազենով վնաս պատճառելու համար: Եվրոպական դատարանի առջև դիմումատուն բողոք է ներկայացրել առ այն, որ կողմերի իրավահավասարության սկզբունքը խախտվել է, քանի որ դատախազը կանգնած է եղել բարձրացված հարթակի վրա, մինչդեռ նա և իր փաստաբանը, կանոնին համաձայն, դատարանի դահլիճում տեղակայված էին ավելի ցածր աստիճանին: Նա նշել է նաև, որ դատախազը մտել է դատական դահլիճ դատավորների հետ միևնույն ժամանակ և միևնույն դրույթով, մինչդեռ նա և իր փաստաբանը ստիպված էին հասարակական մուտքից օգտվել:

Օրենքը: 6§1: Գանգատի առարկա հանդիսացող փաստը բավարար չէ կողմերի իրավահավասարության սկզբունքը խախտելու համար, քանզի չնայած, որ արտոնյալ «ֆիզիկական» դրույթունը տրամադրվել էր դատախազին, սակայն դիմումատուն իր շահերի պաշտպանության առումով չի դրվել անբարենպաստ դրույթան մեջ:

Եզրակացություն՝
(ակնհայտորեն անհիմն)

անընդունելի



Դատարանը նաև միաձայն հաստատել է, որ տեղի չի ունեցել 6 §§ 1 and 3 (գ) հոդվածի խախտում՝ կապված դիմումատուի այն պնդման հետ, որ նրան չի տրամադրվել փաստաբանի օգնություն ոստիկանատանը կալանքի տակ գտվելու ժամանակ:

Ողջամիտ ժամկետ

Դիմումատուի առողջական վիճակի պատճառով մոտ քանի ինք տարի տևող քրեական վարույթ՝ անընդունելի

Krakolinig v. Austria


Գանգատ թիվ 33992/07

Որոշում 10.5.2012 [I բաժանմունք]

Փաստերը: 1985 թվականին դիմումատուին մեղադրել են յուրացման մեջ: Գործի քննությունը նշանակված էր տարածքային դատարանի կողմից 1986 թվականի ամռանը, սակայն դրա սկսվելուց մեկ օր առաջ դիմումատուն սրտի կաթված է ունեցել և չի կարողացել ներկայանալ: Այնուհետև, հիմնվելով մասնագիտական բժշկական եզրակացության վրա, դիմումատուի խնդրանքով գործը մի քանի անգամ հետաձգվել էր: 2007թ. մարտին դիմումատուն խնդրել է, որ վարույթը դադարեցվի, որովհետև նա գտել է, որ այդ վիճակով դրա հետագա ընթացքը կխախտի Կոնվենցիան: Ներպետական դատարանները մերժել էին իր խնդրանքը, և վարույթը մինչ օրս ընթացքի մեջ է: Այլ հանցագործությունների կատարման հետևանքով դիմումատուն դատապարտվել է տարատեսակ ներպետական դատարանների կողմից տարբեր վարույթների շրջանակներում 2000, 2006 և 2009 թվականներին: Եվրոպական դատարանին ուղղված գանգատի մեջ դիմումատուն

գանգատվել է յուրացման առնչությամբ վարույթի տևողությունից:

Օրենքը: 6§1: Զեր բացառվում, որ դիմումատուի գործով դիմումի առարկան որոշ բարդություններ ունի, քանի որ այն առնչվել է ծառայողական հանցագործությանը, սակայն միայն այդ տարրը չէր կարող բացատրել խնդրո առարկա վարույթի բացառիկ երկար ձգվելու հանգամանքը: Բացի այդ, միայն ավստրիական իշխանությունների վրա պատասխանատվությունը չէր կարող դրվել: Զկա որևէ նշում այն մասին, որ նրանք նպաստել են այդ հետաձգումներին. մասնավորապես, տարածքային դատարանը բազմիցս փորձել է անցկացնել դատական նիստը և հաճախակի ընդմիջումների ժամանակ բժշկական մասնագետների քննությանն է հանձնել դիմումատուի դատական նիստին մասնակցելու պիտանելիության հարցը: Հաճախակի կրկնվող հետաձգումները հանդիսացել են դիմումատուի վատ առողջական վիճակի պատճառ: Նա չի կարող պատասխանատվություն կրել դրա համար, քանի որ այդ հարցը իր հսկողությունից դուրս էր գտնվում, մինչդեռ դա, անկասկած, հանդիսացել է վարույթի ձգձգման օբյեկտիվ պատճառ: Համապատասխանաբար, ձգձգումները չեն կարող վերագրվել ներպետական դատարաններին: Այնուհետև, Դատարանը գտել է, որ 6-րդ հոդվածը չի սահմանում քրեական վարույթի կարճման իրավունք մեղադրյալի առողջական վիճակի հիմքով, մասնավորապես այն ժամանակ, եթե, ինչպես դիմումատուի գործով, եղել է նշում առ այն, որ շահագրգիռ անձը իր առողջական վիճակի պատճառով ամբողջությամբ չի



խոչընդոտվել դատական նիստին, որպես այդպիսին, մասնակցելուց:

**Եզրակացություն՝ անընդունելի
(ակնհայտորեն անհիմն):**

ՀՈԴՎԱԾ 8

**Դրական պարտավորություններ
Ընտանեկան կյանքը հարգելու իրավունք
Առևանգված երեխայի կենսաբանական հոր
խնամակալությունը նշանակող դատարանի
հրամանը կատարելու ներպետական
իշխանությունների անփութությունը՝
խախուս**

Santos Nunes v. Portugal

Գանգատ թիվ 61173/08
Վճիռ 22.5.2012 [II բաժանմունք]

Փաստերը: Դիմումատուն ունեցել է ոչ պաշտոնական կապ բրազիլիացու հետ, ով 2002թ.-ին դուստր է ունեցել: Գենետիկական տեստից հետո, 2003 թ.-ին, դիմումատուն ճանաչել է հայրությունը և դիմել է իշխանություններին՝ երեխայի հանդեպ խնամակալության հաստատման համար: Վարույթի ընթացքում հայտնի է դարձել, որ երեխայի մայրը հանձնել է նրան պորտուգալական զույգի խնամակալությանը: Հարցաքննության ընթացքում այդ զույգը (պրն. և տկն. Գ.) բացատրել են, որ երեխային պահելունարավորություն չունենալու պատճառով նրան՝ իրենց խնամքին հանձնելու ժամանակ մայրը ստորագրել է համաձայնությունը հավաստող փաստաթուղթը: Քանի որ նրանք չեն կարող անձամբ երեխա ունենալ, նրանք դիմել են այդ երեխային որդեգրելու համար: 2004թ. հովհանն դատարանը հաստատել է

դիմումատուի խնամակալությունը նրա դստեր հանդեպ: Դատարանը պարզաբանել է, որ չնայած պրն. և տկ. Գ. ֆինանսական ավելի լավ կարգավիճակում էին, քան դիմումատուն, սակայն երեխային վերցնելու ժամանակ նրանք դրսւորել են գործող օրենքների և ընթացակարգի հանդեպ կատարյալ անլուրջ վերաբերմունք: Հետագայում դիմումատուն դիմել է դատարան այն որոշման կատարումն ապահովելու համար՝ պնդելով, որ պրն. և տկն. Գ. Հրաժարվում էին երեխային հանձնել: 2006 թվականին, երբ երեխայի գտնվելու վայրը հաստատելու բոլոր ջանքերը ծախողվել են, դատարանը որոշել է առաջնահերթություն տալ գործին և պրն. Գ.-ն մնացել է խնամակալ: Այնուհետև տկն. Գ.-ն բողոքարկել է հիվանդանոցում երեխային հետազոտելու մասին դատարանի որոշումը: Այդ քննությունից հետո, 2007 թվականին հորը խնամակալ սահմանող վճոի կատարման համար դատարանը նշանակել է ժամանակավոր շրջան: Աղջիկը մնացել էր պրն. և տկն. Գ.-ների հետ, սակայն դիմումատուն կարող էր այցելել նրան: 2008թ. դեկտեմբերին նա հանձնվել է իր հորը: Աղջկան հարցաքննելուց հետո՝ 2009թ. հունվարին, դատավորը հայտարարել է ժամանակավոր շրջանի ավարտի մասին և որոշել, որ աղջիկը այդ ժամանակից ի վեր պետք է ապրի դիմումատուի հետ: Հետագայում պրն. և տկն. Գ.-ների մոտ գնալու իրավունք է շնորհվել: Նրանք մեղադրվել և մեղավոր են ճանաչվել երեխայի առևանգման մեջ, նրանց հանդեպ կիրառվել է երկու տարվա պայմանական պատիժ և իրենց կողմից դիմումատուի վնասների հատուցման հրաման է արձակվել:



Օրենքը: 8-րդ հոդված: Անհրաժեշտ է եղել չորս տարի և հինգ ամիս դիմումատուի խնամակալությունը իր դստեր հանդեպ շնորհող որոշման կատարման համար: Ընթացակարգը առանձնահատուկ էր, քանի որ այն. և տկն. Գ-ների չեխ համագործակցում, նաև արհամարհում էին դատարանի և ոստիկանության կողմից ներկայացվող ծանուցագրերը: Գործը չի համարվել իրատապ մինչև 2006թ., չնայած, որ դիմումատուն 2004թ. հովհանն տեղյակ էր պահել իշխանությունների հետ գույքի կողմից չհամագործակցելու մասին: Դատարանը անակնկալի էր եկել ոստիկանության կողմից երեխային գտնելու ձախողման հանգամանքից: Քանի դեռ այն. Գ-ն հանդիսացել է խնամակալ, տկն. Գ-ն չի ներկայացրել երեխային իշխանություններին: Դա առանձնահատկություններով գործ էր՝ մամուլի մոտ հետաքրքրություն առաջացնելու և անսովոր իրադրության պատճառով, որն անցել է կենսաբանական ծնողների միջև, կամ վերջիններից և պետության միջև հասարակ վեճի սահմանները, քանի որ ներգրավված են եղել երրորդ անձիք ևս: Այնուամենայնիվ, դա չի արդարացրել իշխանությունների կողմից 8-րդ հոդվածով նախատեսված իրենց դրական պարտավորությունների չկատարումը: Ճիշտ է, չնայած տարատեսակ բարդությունների, 2007 թվականից ի վեր ներպետական դատարանները իրենց իրավասության սահմաններում դրսնորել են առավելագույն ուշադրություն երեխայի բարեկեցությունն ապահովելու համար: Այնուամենայնիվ, պորտուգալական իշխանությունները չեն կարողացել ողջամիտ և արդյունավետ միջոցներ ձեռնարկել դիմումատուի հրավունքների պաշտպանության համար,


ինչով իսկ խախտել են իր ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը:
Եզրակացություն՝ խախտում(միաձայն):
41-րդ հոդված՝ 15,000 Եվրո որպես ոչ-նյութական վնասի փոխհատուցում:

Անձնական կյանքը հարգելու իրավունքը
Կաթոլիկ կրոնի և էթիկայի ուսուցիչ պայմանագիրը նորից կնքելու մերժումը նրա կողմից «ամուսնացած հոգևորական» լինելու հանգամանքը իրապարակայնորեն բացահայտելուց հետո՝ խախտում չկա:

Fernandez Martinez v. Spain

Գանգատ թիվ 56030/07
Վճիռ 15.5.2012 [III Բաժանմունք]

Փաստեր: Դիմումատուն աշխարհիկ կաթոլիկ հոգևորական էր: 1984թ. նա դիմել է Վատիկան ամուսնությունից ձեռնպահ մնալու պահանջի մեղմացման համար: Հաջորդ տարի նա ամուսնացել է, և իր կնոջ հետ նրանք ունեցել են հինգ երեխա: 1991թ. ի վեր նա աշխատել է պետական բարձրագույն ուսումնական հաստատությունում որպես կրոնի և էթիկայի ուսուցիչ, իսկ իր աշխատանքային պայմանագիրը ամեն տարի թարմացվել է եպիսկոպոսի կարծիքի հիման վրա, որը պարտադիր էր Կրթության նախարարության համար: 1996թ. դիմումատուն հաճախել է «Ամուսնությունից ձեռնպահ մնալու կամավոր ընտրություն» հանդիպմանը: Մասնակիցները հայտնել են իրենց անհամաձայնությունը տարբեր առիթներով եկեղեցու դիրքորոշման հետ, ներառյալ հղիության արհեստական ընդհատումը, ամուսնալուծությունը, գրավությունը և ծնելիության



Վերահսկողությունը: Դիմումատուի և իր ընտանիքի լուսանկարով հոդված էր տպագրվել թերթում: Այդտեղ նշված էր դիմումատուի անունը և իր կողմից արված մեկնարանությունները: 1997թ. դիմումատուի հանդեա մեղմացվել էր ամուսնությունից ձեռնպահ մնալու պահանջը: Իր ուսուցման պահմանագիրը վերստին չէր կնքվել՝ հիմնվելով այն բանի վրա, որ նա խախտել է իր պարտավորությունը դասավանդել «առանց վեճի վտանգի առաջացման» իր՝ «ամուսնացած հոգևորականի» դիրքը հրապարակելով: Դիմումատուն բողոքարկել է այդ որոշումը ներպետական դատարաններում, սակայն՝ ապարդյուն: Սահմանադրական դատարանը, մասնավորապես, գտել է, որ թեմը տեղյակ է եղել նրա «ամուսնացած հոգևորական» դիրքի մասին, սակայն դադարեցրել է իր պայմանագիրը վերստին կնքելու գործընթացը հոդվածի մամուկու տպագրվելուց հետո, որն իրատարակվել է դիմումատուի նախաձեռնությամբ:

Օրենքը: Հոդված 8: Դիմումատուի պայմանագիրը նորից չկնքելու մասին որոշումը ազդել է մասնագիտական գործունեության ծավալման նրա ակնկալիքների վրա և ունեցել է անուղղակի ազդեցություն իր մասնավոր կյանքի իրավունքից օգտվելու վրա: Այդ իսկ պատճառով 8-րդ հոդվածը կիրառելի է: Համապատասխանաբար, հիմնական հարցն այն է, թե իր դրական պարտականությունների կատարման ընթացքում Պետությունից պահանջվել է արդյոք առավելություն տալ դիմումատուի մասնավոր կյանքը հարգելու իրավունքին Կաթոլիկ Եկեղեցու կողմից իր պայմանագիրը նորից չկնքելու իրավունքի

հանդեպ: Հոգևորական հասարակությունը ավանդաբար և ընդհանրապես գոյություն է ունեցել որպես կազմակերպված կառույց, և երբ խնդրո առարկա է հանդիսանում նրանց կազմակերպվածությունը, Կոնվենցիայի 9-րդ հոդվածը պետք է դիտարկվի 11-րդ հոդվածի լույսի ներքո, որը պաշտպանում է մասնակցությունը միավորումների մեջ Պետության կողմից չհիմնավորված միջամտությունից: Հիսպանական օրենսդրության համաձայն կրոնական համայնքների ինքնավարության գաղափարը ուղեկցվում է Պետության կրոնական չեղոքության սկզբունքով, որը խոչընդոտում է Պետությանը հոգևորականների կողմից ամուսնությունից ձեռնպահ մնալու սկանդալային հարցերով դիրքորոշում հայտնել: Այնուամենայնիվ, չեղոքության այս պարտավորությունը սահմանափակված էր նրանով, որ եպիսկոպոսի որոշումը հանդիսացել էր դատական կարգով վերանայման առարկա: Եպիսկոպոսը չէր կարող ներկայացնել թեկնածուներ, ովքեր չունեին պաշտոնի համար անհրաժեշտ մասնագիտական որակավորում, ինչպես նաև պարտավոր էր հարգել հիմնարար իրավունքներն ու ազատությունները: Չնայած կրոնական կամ բարոյական չափանիշի սահմանանը, որը ծառայել է որպես հիմնավորում թեկնածուների պայմանագրերը նորից չկնքելու համար, դա բացառապես կրոնական իշխանությունների իրավունքն էր, ներպետական դատարանները, այնուամենայնիվ, կարող էին կշռադատել հակասող հիմնարար իրավունքները, ինչպես նաև ունեին իրավասություն քննելու, թե արդյոք կոնկրետ թեկնածու չնշանակելու մասին որոշումը հիմնված է եղել բացառապես կրոնական ազատության կողմից



պաշտպանվող ասպեկտները հանդիսացող կրոնականից բացի որևէ այլ հիմքերի վրա: Դիմումատուն ունեցել է հնարավորություն գործը ներկայացնել համապատասխան դատարանի առջև: Քանի որ հիմքերը, որոնց հիման վրա նրա աշխատանքային պայմանագիրը նորից չէր կնքվել, բացառապես կրոնական բնույթ է ունեցել, Դատարանը սահմանափակվել է միայն երաշխավորելով, որ ո՞չ ներպետական համակարգի հիմնարար սկզբունքներին, և ո՞չ էլ դիմումատուի արժանապատվությանը վնաս չի հասցել:

Սույն գործում, քննության առարկա հանդիսացող հոդվածի տպագրումը եպիսկոպոսին հանգեցրել է այն մտքին, որ անհրաժեշտ վստահություն ցուցաբերելու պարտավորությունը խախտվել է: Այս պարտավորությունը անհրաժեշտորեն առաջ էր բերել կոնկրետ բնութագրեր և մնացած ուսուցիչներից տարբերվող հատկություններ, որոնք ունեին կաթոլիկ կրոնի և բարոյագիտության ուսուցիչները: Դիմումատուի հետ պայմանագիրը նորից չկնքելով հոգևոր իշխանությունները պարզապես կատարել են իրենց պարտականությունները Եկեղեցական օրենքին և կրոնական ինքնավարության սկզբունքին համապատասխան: Իր պայմանագիրը ստորագրելուց դիմումատուն տեղյակ էր կամ պետք է տեղյակ լիներ այդպիսի բնույթի պաշտոնի համար աշխատանքային հարաբերությունների առանձնահատկությունների մասին: Արդյունքում Դատարանը գտել է, որ դիմումատուն սահմանափակված է եղել հավատարմության պարտականությամբ, և այդ կապակցությամբ հանգել է նրան, որ նա չի լրել խնդրո առարկա հանդիսացող

հանդիպումը նույնիսկ այն բանից հետո, երբ նկատել է զանգվածային լրատվության ներկայացուցիչներին, և որ նա գտնվել է այն մարդկանց միջև, ովքեր բացահայտ կերպով արտահայտել են իրենց անհամաձայնությունը տարբեր հարցերով Եկեղեցու քաղաքականության հանդեպ: Ավելին, համապատասխան դատարանները բավականին մանրակրկիտ ներկայացրել են մանրամասն պատճառաբանություն այն մասին, որ հավատարմության այդպիսի պարտականությունները ընդունելի էին և որ իրենց նպատակն էր պաշտպանել հանրության և դպրոցում սովորող աշակերտների ու ծնողների զգացմունքային խոցելիությունը: Այնուհետև, գործողությունների ազատության և շրջահայաց լինելու պարտականությունը ամենից կարևոր էր, քանի որ դիմումատուի ուսուցման ուղղակի շահառուները անչափահաս երեխաներն էին, ովքեր էությամբ խոցելի և զգայուն էին: Ինչ վերաբերվում է Պետության հայեցողության շրջանակին՝ համապատասխան դատարանները տարատեսակ մասնավոր շահերի միջև հասել են արդարացի հավասարակշռության:

Եզրակացություն. չկա խախտում (վեց ձայնը՝ մեկի դեմ):

(Տե՛ս Lombardi Vallauri v. Italy ընդդեմ Խոտալիայի, գանգատ թիվ 39128/05, 2009թ. հոկտեմբերի 20, Նախադեպային տեղեկատու թիվ 123. Obst v. Germany, գանգատ թիվ 425/03, և Schüth v. Germany, գանգատ թիվ 1620/03, 2010թ. սեպտեմբերի 23, Նախադեպային տեղեկատու թիվ 133, և Siebenhaar v. Germany, գանգատ թիվ 18136/02, 2011թ. փետրվարի 3):



Ոստիկանության՝ քաղաքի կենտրոնական թաղամասերում անձանց կանգնեցնելու և խուզարկելու լիազորությունները անվտանգության տեսանկյունից վտանգավոր, այն է՝ բռնության գործադրմամբ կատարվող հանցագործությունների տարածման հանգամանքից ելնելով՝ անընդունելի:

Colon v. the Netherlands

Գանգատ թիվ 49458/06

Որոշում 15.5.2012 [III բաժանմունք]

Փաստերը: Ի պատասխան քաղաքում բռնի հանցագործությունների թվի աճի՝ Ամստերդամի քաղաքապետը Տեղական ինքնակառավարման մարմինների մասին օրենքի 151«բ» բաժնի համաձայն հրամաններ է արձակել, որոնցով քաղաքի որոշակի թաղամասերը սահմանված ժամկետների համար հայտարարել է անվտանգության համար վտանգավոր տարածաշրջան: Դա իր հերթին լիազորել է հանրային դատախազին արձակել տասներկու ժամվա ընթացքում ուժ ունեցող հրամաններ, որոնք թույլ են տվել ոստիկաններին հրազենի առկայության կասկածանքով խուզարկել նշված տարածաշրջանում գտնվող յուրաքանչյուրին: 2006թ. մայիսին և 2007թ. մայիսին թողարկված երկու գեկուցներում ԿՈՏ-ի (COT) ճգնաժամի կառավարման և անվտանգության ինստիտուտը մատնանշել է նշված կանխարգելիչ խուզարկությունների կիրառումից ի վեր նշված տարածաշրջաններում հրազենային պատահարների թվաքանակի էական և շարունակական անկման փաստի մասին: Եվրոպական դատարանին ուղղված իր գանգատի մեջ դիմումատուն, ով մեկ այլ

առիթով դատապարտվել էր, սակայն չէր ազատազրկվել խուզարկություն անցնելու մասին հրամանին ենթարկվելու համար, բողոքել է առ այն, որ հանրային դատախազին տրվել է լիազորություն նշված տարածաշրջանում ներխուժել իր մասնավոր կյանքի մեջ առանց որևէ նախնական դատական վերահսկողության:

Օրենքը: 8-րդ հոդված: Կանգնեցնելու և խուզարկելու իրավասությունը հանդիսացել է դիմումատուի մասնավոր կյանքի իրավունքի միջամտություն, որը իրականացվել է օրենքի հիման վրա և հետապնդել է հանրային անվտանգությունը պաշտպանելու և անկարգությունների կամ հանցագործությունների կանխարգելման իրավաչափ նպատակներ:

Ժողովրդավարական հասարակությունում միջամտության անհրաժեշտությունը որոշելիս Դատարանը, առաջին հերթին, անդրադարձել է այն իրավական ակտի կառուցվածքին, որի ներքո գործել է կանխարգելիչ խուզարկության համակարգը: Գործող օրենսդրությանը համաձայն անվտանգության համար վտանգ ներկայացնող տարածաշրջանը մատնանշելու քաղաքապետի իրավասությունը կախված է եղել տեղական խորհրդի կողմից ենթաօրենսդրական ակտի ընդունումից: Որոշված տարածաշրջանը չէր կարող լինել ավելի մեծ քան բացարձականիրաժեշտ էր, և անհրաժեշտությունը վերանալուց հետո հրամանը պետք է չեղյալ համարվեր: Քաղաքապետի լիազորությունները ենթակա էին վերանայման և վերահսկողության տեղական խորհրդի կողմից, ընտրված ներկայացնուցական մարմնի կողմից, և նշանակման հրաման արձակելուց առաջ քաղաքապետը պետք է խորհրդակցեր



հանրային դատախազի և տեղական ոստիկանության պետի հետ: Կանխարգելիչ խուզարկության գործունեությունը պետք է նշանակվեր հանրային դատախազի կողմից, ում լիազորությունները նույնպես սահմանված էին օրենքով: Հանրային դատախազը պետք է արձակեր այդպիսի խուզարկություններ կատարելու ենթակա տարածաշրջանները սահմանող իրաման, և այդպիսի իրամանները պետք է գործեին միայն տասներկու ժամ և նորացման ենթակա չինեին:

Համապատասխանաբար, որևէ առանձին գործադիր իշխանություն չուներ լիազորություն ինքնուրույն նշանակել կանխարգելիչ խուզարկության գործընթաց: Ինչ վերաբերվում է փաստական հանգամանքներին, Բուրգոմիստրի և ԿՈՏ-ի (COT) ճգնաժամի կառավարման և անվտանգության ինստիտուտի կողմից տրված բացատրություններից ակնհայտ է, որ կանխարգելիչ խուզարկությունները ունեցել են իրենց ծրագրված ազդեցությունը Ամստերդամում բռնի հանցագործությունների թվաքանակը նվազեցնելու գործում: Միշտ առկա է եղել հնարավորություն, որ դիմումատուն կենթարկվեր իր համար տհաճ և անհարմար կանխարգելիչ խուզարկությանը, եթե նա ոիսկի գնալով մտներ քաղաքի կենտրոն կանխարգելիչ խուզարկության նշանակման մասին իրամանի ուժի մեջ լինելու ընթացքում: Այնուամենայնիվ, այսպիսի խուզարկությունները և հետապնդվող նպատակներին հասնելու համար դրանց արդյունավետությունը շրջապատող իրավունքի կառուցվածքի լույսի ներքո՝ ներպետական իշխանություններին իրավունք է տրվել դիտարկել, որ հանրային շահը ավելի կարևոր է եղել, քան դիմումատուն

պատճառված որևէ անհատական վնասը և տվել է «վերաբերելի» և «բավարար» պատճառներ իր անձնական կյանքը հարգելու իրավունքին միջամտության համար:

Եզրակացություն. անընդունելի (ակնհայտորեն անհիմն):

(Տե՛ս նաև Gillan and Quinton v. the United Kingdom գանգատ թիվ 4158/05, 2010թ.

հունվարի 12, Նախադեպային տեղեկատու թիվ 126):

ՀՈԴՎԱԾ 10

Դրական պարտավորություններ


Լրագրողների համար ռադիոկայանի մատչելիությունը հաստատող դատարանի իրամանի կատարման համար իշխանությունների կողմից բավարար միջոցների ձեռնարկման ձախողում՝ հախսպում

Frăsilă and Ciocorlan v. Romania

Գանգատ թիվ 25329/03

Վճիռ 10.5.2012 [III բաժանմունք]


Փաստերը: Առաջին դիմումատուն երկու կազմակերպությունների՝ ռադիո Մ. Պյուսի և Տելե Մ.-ի, կառավարիչ էր, ով դրանց միջև իրականացրել է բազմաթիվ հեռարձակումներ: 2002թ. օգոստոսին, երբ Տելե Մ.-ն հեռարձակել էր երկու հաղորդում ազդեցիկ տեղական քաղաքական գործի մասին, ֆինանսական կարիքի մեջ գտնվող առաջին դիմումատուն ստիպված էր վաճառել խնդրո առարկա հանդիսացող կազմակերպությունը: Նոյն օրը երկու կազմակերպությունները ընկերակցություն են ստեղծել ռադիոհաղորդումների արտադրության և հաղորդման համար:



Ընկերակցության պայմանագիրը ի թիվս այլոց սահմանել է նաև, որ Ռադիո Մ. Պյուտաը, որը դեռևս կառավարվել է առաջին դիմումատուի կողմից և վարձել էր Երկրորդ դիմումատուին՝ որպես խմբագիր, շարունակելու էր իր հեռարձակումները իր գլխամասերից, որոնք գտնվում էին Տելե Մ.-ի հետ միևնույն շենքում: Այնուամենայնիվ, 2002թ. հեկտեմբերից ի վեր Տելե Մ.-ի ներկայացուցիչները Երկու դիմումատուներին էլ մերժել են մուտք գործել ռադիոկայանի խմբագրության գրասենյակ: Այդ որոշումը բողոքարկման ժամանակ հաստատվել է, սակայն այն ի կատար ածելու բոլոր ջանքերը ապարդյուն են անցել: Եվրոպական Դատարանի առջև դիմումատուները գանգատվել են, որ համապատասխան իշխանությունները չեն տրամադրել նրանց արդյունավետ օգնություն 2002թ. դեկտեմբերին կայացրած դատարանի վերջնական որոշման կատարումն ապահովելու հարցում՝ դրանով իսկ խոչընդոտելով իրենց աշխատանքին որպես ռադիոհաղորդավար և այլիսով խախտելով խոսքի ազատության իրավունքը:

Օրենքը: 10-րդ հոդված: Չնայած իշխանությունները ուղղակիորեն պատասխանատու չեն եղել դիմումատուների խոսքի ազատության ենթադրյալ սահմանափակման համար, այնուամենայնիվ անհրաժեշտ էր սահմանել արդյոք պատասխանող Պետությունը կատարել է որևէ դրական պարտավորություն, որ նա կարող էր ունենալ, այդ ազատությունը այլոց միջամտությունից պաշտպանելու համար: Գործը վերաբերվել է միջոցների, որոնցով կարելի էր իրականացնել խոսքի ազատության իրավունքը այն

մասնագիտությամբ անձանց, որը Դատարանի կողմից ճանաչված է որպես որոշիչ հսկողական դեր ժողովրդավարական հասարակության մեջ: Ավելին, Պետությունը հանդիսանում է բազմակարծության բարձրագույն Երաշխավոր, հատկապես տեսալսողական լրատվամիջոցներում, որոնք հաճախ հեռարձակում են շատ մեծ լսարանին: Այդ դերը դառձել էր էլ ավելի որոշիչ, եթե մամլո անկախությունը վտանգի տակ է դրվել քաղաքական և տնտեսական իշխանություն ունեցող արտաքին ճնշման ներքո: Համապատասխանաբար, Դատարանը առանձնակի կարևորել է այն փաստը, որ Ռումինիայում մամուլի ազատությունը համապատասխան ժամանակաշրջանում անբավարար էր, տեղական մամուլը ուղղակիորեն կամ անուղղակի կառավարվել է տարածքային տնտեսական կամ քաղաքական առաջատար ուժերի կողմից: Սույն գործում, առաջին դիմումատուն գանգատվել է, որ նրա վրա ճնշում է գործադրվել հեռուստատեսային կազմակերպությունում իր մասնաբաժինը վաճառելու համար: Այսպիսի հանգամանքներում, Պետությունը պարտավոր էր ձեռնարկել արդյունավետ քայլեր՝ ի օգուտ կայացրած վճռի կատարման մեջ դիմումատուներին օգնելու համար: Դիմումատուները ձեռնարկել են բավարար քայլեր, որպեսզի դատարանի որոշումը ի կատար ածվի: Այնուամենայնիվ, իրենց հասանելի իրավական միակ միջոցները, մասնավորապես՝ դատական ակտերի հարկադիր կատարման համակարգը, եղել է անհամարժեք և ոչ արդյունավետ: Դատական կատարածուն չէր ահազանգել ոստիկանության օգնությանը, ինչը պետք է լիներ՝ հաշվի առնելով այն մարդկանց



համագործակել մերժող վերաբերմունքը, որոնց դեմ էր ուղղված դատարանի հրամանը, և չեն ձեռնարկել որևէ այլ քայլեր քննվող որոշումը ի կատար ածելու համար: Չերծ մնալով դատարանի որոշումը կատարելու գործում դիմումատուներին աջակցելու համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելուց՝ ներպետական իշխանությունները զրկել են 10-րդ հոդվածի դրույթները բոլոր օգտակար ազդեցություններից և խոչընդոտել են դիմումատուների ռադիոլրագրողի՝ իրենց մասնագիտական գործունեությունը իրականացնելուն:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

41-րդ հոդված՝ ընդհանուր առմամբ 18,000 եվրո՝ որպես նյութական և ոչ-նյութական վնասի փոխհատուցում:

ՀՈԴՎԱԾ 14


**Խոտրականություն (Թիվ 1
Արձանագրության 3-րդ հոդված)**

**Քաղաքական կուսակցության
ֆինանսական աջակցության մերժումը այն
հիմքով, որ այն չի հավաքել օրենքով
սահմանված օգնության իրավունք
ստանալու ձայների նվազագույն քանաքը (7
տոկոս)՝ խախտում չկա**

**Ozgurluk ve Danisima Partisi (ODP) v.
Turkey**

Գանգատ թիվ 7819/03
Վճիռ 10.5.2012 [II բաժանմունք]


Փաստերը: Դիմումատու կուսակցությունը ստեղծվել էր 1999թ.-ի տեղական ինքնակառավարման և խորհրդարանական ընտրություններին մասնակցելու նպատակով: Այդ կապակցությամբ, այն դիմեց քաղաքական կուսակցություններին Սահմանադրությամբ նախատեսված ֆինանսական աջակցություն ստանալու համար: Խոնդրանքը մերժվեց այն հիմքով, որ այն չի կատարել օրենսդրությամբ սահմանված պայմանները, այն է՝ խորհրդարանում մանդատ ունենալը կամ նախորդ ընտրություններում առնվազն տրված ձայների 7 տոկոս ունենալը: Դիմումատու կուսակցությունը բողոքարկեց այս որոշումը վարչական դատարանում՝ այն հիմքով, որ առանց անհրաժեշտ ֆինանսական միջոցների դժվար է ծավալել քաղաքական գործունեություն և իրականացնել քարոզություն և որ նրան ֆինանսական օգնություն շնորհելը հակասում է խոտրականության բացառման սկզբունքին: 1999թ.-ին բողոքը մեժվեց այն հիմքով, որ դիմումատու կուսակցությունը ֆինանսական աջակցություն ստանալու համար չի կատարել օրենքով պահանջվող պայմանները: 2002թ-ին Գերագույն վարչական դատարանը այդ վճիռը թողեց ուժի մեջ: Եվրոպական դատարանի առջև դիմումատու կուսակցությունը ներկայացրեց, որ ֆինանսական օգնություն շնորհելու մերժման մասին որոշումը անբարենպաստ դրության մեջ դրեց նրան 1999թ-ի, 2002թ-ի և 2007թ-ի ընտրություններում, որոնց արդյունքում այն հավաքեց համապատասխանաբար տրված ձայների 0.8 տոկոսը, 0.34 տոկոսը և 0.15 տոկոսը:



Օրենքը: Կոնվենցիայի 14-րդ հոդվածը Թիվ 1 Արձանագրության 3-րդ հոդվածի համկցությամբ: Ֆինանսական աջակցություն շնորհման մերժումը ավելին բարդացրեց դիմումատու կուսակցության համար ներպետական մակարդակում նրա քաղաքական հայացքները տարածելը, քան այն կուսակցությունների համար, որոնք ստացան այդ աջակցությունը: Դիմումատու կուսակցությանն այլ կերպ էին վերաբերվում նրա ընտրական իրավունքները կատարելիս: Քաղաքական կուսակցությունների պետական ֆինանսավորումը կոռուպցիայի կանխման և անհատ բարեգործներից չափազանց մեծ կախվածությունից խուսափելու միջոց էր: Եվրոպական երկրների մեծամասնությունում կիրառվող համակարգի ուսումնասիրությամբ պարզվեց, որ դրամաշնորհները իրականացվում են երկու համակարգերի հիման վրա՝ հստակ հավասար հիմքով կամ արդար ֆինանսավորման սկզբունքով: Վերջին դեպքում միշտ պահանջվում է ընտրական աջակցության նվազագույն մակարդակ՝ թեկնածությունների քանակի ավելորդ աճից խուսափելու նպատակով: Եվրոպայի խորհրդի մարմինների կողմից ընդունված ժողովրդավարական համակարգում քաղաքական կուսակցությունների վերաբերյալ որևէ ակտով չի սահմանվում ներպետական օրենսդրությամբ պետական ֆինանսավորում ստացող կուսակցություններին առաջարկված պահանջը ընտրական աջակցության նվազագույն մակրդակ ունենալու մասին որպես անհիմն, ոչ էլ սահմանվում է հատուկ մակարդակ նման աջակցության համար: Որոշակի մասնագիտացված հիմնարկների գեկուցներից պարզ է դառնում, որ, մի կողմից, անհրաժեշտ է երաշխավորել, որ

սահմանված շեմը չափազանց բարձր չէ, որ չխախտվի քաղաքական բազմակարծությունը և փոքր կուսակցությունների իրավունքները և, մյուս կողմից, որ դրամական միջոցներ շնորհելու բանաձնը չպետք է լինի այնպիսին, որ հնարավորություն տա երկու գլախավոր կուսակցություններին մենաշնորհել պետական դրամական միջոցներ ստանալու իրավունքը:

Ընտրական աջակցության նվազագույն մակարդակ պահանջող արդար ֆինանսավորման համակարգին համապատասխան քաղաքական կուսակցությունների պետական ֆինանսավորումը օրինական նպատակ էր հետապնդում, այն է՝ բազմակարծիք ժողովրդավարության ամրապնդումը՝ թեկնածությունների չափազանց մեծ և անարդյունավետ տարանջատումից խուսափելու հետ մեկտեղ: Թուրքիայում պետական ֆինանսավորմամբ կուսակցություններից պահանջվող ներկայացուցչության նվազագույն մակարդակը ամենաբարձրն էր Եվրոպայում (7%): Այնուամենայնիվ, քննարկվող ժամանակահատվածում, այդ շեմը խորհրդարանում ներկայացված քաղաքական կուսակցություններին ֆինանսական աջակցության մենաշնորհի ստեղծման ազդեցություն չի ունեցել: Ի լրումն, 1999թ-ի, 2002թ-ի և 2007թ-ի խորհրդարանական ընտրությունների դիմումատու կուսակցության արդյունքները յոթ տոկոսից էականորեն ցածր էին և հնարավորություն չէին տա ֆինանսավորում ստանալ եվրոպական մի շարք այլ պետություններում: Դիմումատու կուսակցությունը չի ապացուցել, որ այն թուրքական ընտրազանգվածի կողմից ունեցել է բավարար աջակցություն էական



Ներկայացուցության մասին պնդելու համար: Ի վերջո, պետությունը նախատեսում էր քաղաքական կուսակցությունների աջակցության այլ ձևեր, ներառյալ՝ որոշակի եկամտահարկից ազատում և ընտրարշավի ընթացքում եթերաժամի բաշխումը: Դիմումատու կուսակցությունը ստացել էր օգուտ այդ ուղղիչ պետական աջակցության ձևերից: Ֆինանսական աջակցություն շնորհելու համակարգը համաշափի էր՝ հաշվի առնելով դրա ծավալը և ընթացիկ փոխհատուցման միջոցները: Արդյունքում՝ դիմումատու կուսակցության ուղղակի ֆինանսական աջակցություն շնորհման մերժումը այն հիմքով, որ այն չէր հասել օրենքով պահանջված 7 տոկոսանոց նվազագույն մակարդակին, ունեցել է օբյեկտիվ և պատճառաբանված հիմք: Այն չէր սահմանափակել մարդկանց կամքի ազատ արտահայտման իրավունքի բուն էությունը:

Եզրակացություն՝ խախտում չկա (հինգ ձայն ընդդեմ երկուայի):

ՀՈԴՎԱԾ 34

Միջնորդագիր ներկայացնելու իրավունքի իրականացմանը խոչընդոտելը


Դատարանի կողմից նշանակված ժամանակավոր միջոցներին չհամապատասխանելը՝ խոչտանգման իրական վտանգը հաշվի առնելով. խախտում

Labsi v. Slovakia

Գանգատ թիվ 33809/08

Վճիռ 15.5.2012 [III բաժանմունք]

Փաստերը: 2001թ.-ին Լոնդոնում դիմումատուն՝ Ամերիկայի քաղաքացի, ամուսնում է Սլովակիայի քաղաքացու հետ: Նա ավելի ուշ հանձնվեց Ֆրանսիային ահարեւէզության մեղադրանքների հիման վրա և նրա նկատմամբ կայացվեց հինգ տարվա բանտարկության դատավճիռ: Ազատվելուց հետո նա ուղևորվեց Սլովակիա, որտեղ ապաստան ստանալու երեք անհաջող փորձ ձեռնարկեց: 2006թ.-ին Սլովակիայի ներգաղթային իշխանությունները կարգադրեցին նրա վտարումը և արգելեցին նրան կրկին մուտք գործել երկիր 10 տարվա ընթացքում: Ամերիկայի իշխանությունները հետագայում պահանջեցին իրականացնել նրա հանձնումը, որտեղ նա իր բացակայությամբ ահարեւէզական կազմակերպության մասնակից լինելու և կենծիքի համար ցմահ ազատազկման էր դատապարտվել: 2008թ.-ին Սլովակիայի Գերագույն դատարանը որոշեց, որ դիմումատուն չէր կարող հանձնվել Ամերիկին, քանի որ կար վտանգ, որ նա խոշտանգմանը կենթարկվեր, և Եվրոպական դատարանը իր Կանոնակարգի 39-րդ Կանոնի համաձայն ժամանակավոր միջոց էր սահմանել, որը պահանջում էր Սլովակիայի իշխանություններից չհանձնել նրան: 2010թ-ի մարտին Գերագույն դատարանը հաստատեց ներգաղթային իշխանությունների սկզբնական որոշումը՝ 2006թ.-ին վտարել դիմումատուին այն բանի համար, որ նա Սլովակիայի անվտանգության էր սպառնում ահարեւէզության մեջ իր ներգրավման պատճառով: Տեղեկանալով այս իրավիճակի մասին, Եվրոպական դատարանը, հատուկ տեղեկացրել է Սլովակիայի կառավարությանը, որ 39-րդ հոդվածով նախատեսված ժամանակավոր միջոցը դեռ



գործում է՝ մինչև դիմումատուի կողմից սահմանադրական բողոքի հնարավոր ներկայացումը: Դիմումատուն, այնուամենայնիվ, երեք օր անց վտարվեց Ալժիր:

Օրենքը: 3-րդ հոդված: Այն երաշխիքները, որոնք Սլովակիայի կառավարությունը ստացել էր Ալժիրի իշխանություններից, ընդհանուր բնույթի էին և պետք է հաշվի առնվելին Ալժիրում տիրող մարդու իրավունքներին վերաբերող դրության վերաբերյալ տեղեկության լուսի ներքո: Դատարանի տրամադրության տակ գտնվող նյութերից՝ ներառյալ միջազգային մարմինների գեկուցները և Սլովակիայի իշխանությունների կողմից ձեռք բերված փաստերը, պարզ է, որ վտարելու ժամանակ, լուրջ հիմքեր կային ենթադրելու, որ դիմումատուին իրական վտանգ է սպառնում ենթարկվել Ալժիրում 3-րդ հոդվածին հակասող վերաբերմունքին: Փաստարկը, որ վտարումը, այնուամենայնիվ, արդարացված էր, քանի որ նա սպառնում էր անվտանգությանը, չէր կարող ընդունվել 3-րդ հոդվածով սահմանված երաշխիքի բացարձակ բնույթի պատճառով: Հայտարարվեց, որ վերադառնալիս դիմումատուն Ալժիրի հետախուզության կողմից կալանավորվել էր տասներկու օրով, և չի եղել Սլովակիայի պաշտոնատար անձի կողմից այցելության հարցման որևէ պատասխան նրա նկատմամբ վերաբերմունքի մասին Ալժիրի իշխանությունների երաշխիքները ստուգելու համապատասխանության վերաբերյալ: Այն երաշխիքները, որ նա պաշտպանված կլիներ վատ վերաբերմունքի վտանգից այսպիսով անբավարար էին:


Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

13-հոդված: Գերագոյն դատարանի 2010թ-ի մարտի վճուհ հետո ընդամենը մեկ աշխատանքային օր անց դիմումատուի վտարումը Ալժիր գրկել էր նրան արդյունավետ իրավական պաշտպանության միջոցից, քանի որ դա խոչընդոտ էր հանդիսացել սահմանադրական բողոքի միջոցով փոխհատուցում պահանջելուն, քանի որ բողոքը կարող էր ներկայացվել միայն վիճարկվող որոշման ուժի մեջ մտնելու պահից, ինչպես նաև բողոքը հետ պետք է ներկայացվեր նաև որոշումը:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

34-րդ հոդված: Պաշտպանության աստիճանը, որը Դատարանը իրավասու էր կիրառել և որը դիմումատուն պնդում էր 3-րդ հոդվածի ներքո, իր Ալժիր վտարմամբ անդառնալիորեն նվազել էր: Իր վտարումից հետո դիմումատուի ներկայացուցիչները իր հետ կապը կորցրել էին և, որպես օրինակ, ապացուցների ձեռք բերումը ի հաստատում դիմումատուի հայտարարությունների ավելի էր բարդացել: Դատարանը, այսպիսով, հնավորություն չէր ունեցել դիմումատուի բողոքների պատշաճ ուսումնասիրման նրա վտարման պատճառով նմանատիպ գործերով իր կայացած պրակտիկայի համաձայն: Դատարանը, բացի այդ, հնարավիրություն չէր ունեցել դիմումատուին պաշտպանել վատ վերաբերմունքից: Դիմումատուին, այսպիսով, խոչընդոտել էին անհատական դիմում ներկայացնելու իր իրավունքը արդյունավետ կիրառել:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):



41-րդ հոդված. 15,000 եվրո որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

(Տե՛ս նաև *Mannai v. Italy*, թիվ 9961/10, 2012թ-ի մարտի 27, թիվ 150 նախադեպային տեղեկատու):

ՀՈԴՎԱԾ 35

Հոդված 35§1

Ներպետական իրավական պաշտպանության միջոցների սպառում

Դիմումի քննության անհնարինությունը դատավարական նորմի առանձնապես հստակ մեկնաբանման պատճառով՝ նախնական առարկությունը մերժվել է։ ընդունելի է

UTE Saur Vallnet v. Andorra

Գանգատ թիվ 16047/10
Վճիռ 29.5.2012 [III բաժանմունք]

Փաստերը: Դիմումատուն հանդիսանում է Ժամանակավոր ձեռնարկատիրական միավորում: 2007թ-ին Տարածքային զարգացման նախարարությունը երկու վարչական տուգանք է սահմանում դիմումատուի նկատմամբ: Դիմումատուն վերաքննիչ բողոք է ներկայացնում նախարարության այդ որոշումների դեմ, սակայն 2008թ-ին իր բողոքը մերժվում է: 2009թ-ի սեպտեմբերի 14-ին վերաքննիչ բողոքի վերաբերյալ Գերագոյն դատարանի վարչական բաժինը անփոփոխ է թողնում ստորադաս դատարանի վճիռը: 2009թ-ի հոկտեմբերի 1-ին դիմումատուն

անվավերության հիմքով երկու դիմում է ներկայացնում վճիռը բեկանելու համար: Նա դիմումներից մեկում հայտնել է, որ վարչական բաժնի գեկուցող դատավորը, ով նաև 2002թ-ից ի վեր Անդորրայի կառավարությանը իրավաբանական ծառայություններ մատուցող իսպանական իրավաբանական ընկերության մասնակից էր և տնօրենների խորհրդի անդամ, անկախ և անկողմնակալ չէր: Այն ամենը ինչ նա ներկայացրել էր իր դիմումին կից իրավաբանական ընկերության կայքից վերցված փաստաթուղթը էր, որը 2009թ-ի սեպտեմբերի 24-ին քննարկվել էր և իրապարակվել: Գերագոյն դատարանը միացրեց երկու դիմումները և մերժեց այն՝ ժամկետը բաց թողնելու հիմքով, որովհետև վերաքննիչ բողոքը ներկայացնելու ժամկետը տասնինգ օրացուցային օր էր վճիռը կատարելուց կամ այն պահից հետո, եթե կողմին տեղեկացրել էին իրավունքի խախտման մասին, որը նա մտադիր էր իրականացնել: Դիմումատուն Սահմանադրական դատարան *empara* բողոք ներկայացրեց, որը անընդունելի համարվեց: Դատարանը սահմանեց, որ դիմումատուն չէր կարող հիմնվել «նոր տեղեկության» վրա, քանի որ դատավորի դիրքորոշումը օբյեկտիվ էր և դա մի քանի տարի հանրահայտ փաստ էր, և, որ դիմումատուն չէր ապացուցել, որ նա տեղեկացել է այդ մասին միայն այն օրը, եթե նա իր բողոքն էր ներկայացրել: 2011թ-ին կառավարության կողմից սկսված՝ 2008թ-ի վճիռը ի կատար ածելու վերաբերյալ քննության ընթացքում Գերագոյն դատարանի քրեական բաժինը դատավորին բացարկ հայտնելու մասին միջնորդությունը բավարարեց կառավարության հետ դիմումատուի կողմից ներկայացված որոշակի



փաստաթղթերի իսկությունը ստուգելուց հետո: Զեկուցող դատավորը փոխարինվեց:

Օրենքը: 35§1 հոդված: Կառավարությունը հայտնեց, որ ներպետական իրավական պաշտպանության միջոցները չեն սպառվել, քանի որ դիմումատուն օրենքով սահմանված ժամկետի ընթացքում չեր ներկայացրել անվավերության հիմքով որոշումը չեղյալ համարելու մասին միջնորդություն: Սակայն, վերաբնիչ բողոք ներկայացնելու համար ժամանակի հաշվարկը սկսվել է այն պահից, երբ բողոքարկողը արդյունավետորեն գործելու հնարավորություն ստացավ: Դիմումատուի անվավերության հիմքով վճիռը բեկանելու մասին երկու միջնորդությունները տարբեր հիմնավորումներով էին և երաշխավորում էին տարբերակված պատասխան դատարանների կողմից: Ինչ վերաբերում է միջնորդությանը, որ զեկուցող դատավորը անկողմնակալ չեր, ճիշտ է, որ դիմումատուն հնարավորություն չուներ ապացուց ներկայացնել, երբ նրան տեղեկացրին գեկուցող դատավորի դիրքորոշման մասին: Դա, այնուամենայնիվ, առավել քիչ հավանական էր, որ որևէ նման ապացուց կարող էր ներկայացվել: Նույնիսկ եթե ենթադրենք, որ, ինչպես պնդում էր կառավարությունը՝ 2009թ-ի սեպտեմբերի 24-ին դիմումատուն տեղյակ էր դատավորի դիրքորոշման մասին, ցանկացած դեպքում նա ներկայացրել է վճիռը բեկանելու մասին միջնորդությունը 2009թ-ի հոկտեմբերի 1-ին, ինչը համապատասխանում էր օրենսդրությամբ սահմանված տասնհինգօրյա ժամկետին: Հնարավոր չեր պնդել, որ դիմումատուն անփույթ էր գործել կամ սխալվել էր՝ կարծելով, որ *dies a quo* կասկածի տակ էր և Գերագույն դատարանի վարչական

բաժինը չի անդրադարձել միջնորդությանը հիմք հանդիսացող հայտարարություններին: Գերագույն դատարանի քրեական բաժինը, որը բավարարել էր դատավորին բացարկ հայտնելու դիմումատուի միջնորդությունը, դա արել էր ավելի ուշ: Գերագույն դատարանի վարչական բաժնի և Սահմանադրական դատարանի դատավարական կանոնի առանձնակի հստակ մեկնաբանումը գրկել էր դիմումատուին նրա՝ անվավերության հիմքով վերաբնիչ բողոք ներկայացնելու հնարավորությունից:

Եզրակացությունը՝ նախնական առարկությունը մերժվել է, ընդունելի (միաձայն):


Դատարանը գտավ նաև 6§1 հոդվածի խախտում Գերագույն դատարանի վարչական բաժնի անկողմնակալ չինելու պատճառով:

41-րդ հոդված: 12,000 եվրո որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում, նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցը մերժվել է:

Ներպետական իրավական պաշտպանության միջոցների սպառում Արդյունավետ ներպետական իրավական պաշտպանության միջոց. Գերմանիա

Զգձգված դատաքննության և քրեական հետախուզության մասին ակտի վերաբերյալ՝ արդյունավել ներպետական իրավական պաշտպանության միջոց

Taron v. Germany



Գանգատ թիվ 53126/07
Որոշում 28.5.2012 [Վ բաժանմունք]


Փաստերը: 2011թ-ի դեկտեմբերի 3-ին ծգգված դատաքննության և քրեական քննության իրավական ակտը ուժի մեջ մտան Գերմանիայում: Դրանք ընդունվեցին ի պատասխան Եվրոպական դատարանի *Rumpf v. Germany*¹ գործով պիլոտային վճռի, համաձայն որի Գերմանիայից պահանջվում էր երկարատև գործերում արդյունավետ իրավական պաշտպանության միջոց ներկայացնել: Այն ընդգրկում է քաղաքացիական և քրեական դատավարությունները և միավորում է արագացված քննության մեխանիզմը հետագա փոխհատուցման համապատասխան հայց ներկայացնելու իրավունքի հետ: Անցումային դրույթները սահմանում են, որ ակտը կիրառելի է նախորդ և ներկա վարույթներում, որոնց տևողությունը կարող է կամ արդեն իսկ դարձել է Եվրոպական դատարան ներկայացրած բողոքի առարկա: Փոխհատուցման հայցերը անցումային դրույթի ներքո պետք է համապատասխան դատարաններին ներկայացված լինեին մինչ 2012թ-ի հունիսի 3-ը:

2007թ-ի նոյեմբերին Եվրոպական դատարանին հասցեագրված դիմումում Կոնվենցիայի 6§1 հոդվածի ներքո դիմումատուն բողոքեց քննության երկարության դեմ, որը նա սկսել էր շինարարության թույլտվությունը վիճարկելու նպատակով: Դատարանը ներպետական նոր

օրենսդրության լուսի ներքո սկսեց ուսումնասիրել, թե արդյոք նա սպառել էր ներպետական իրավական պաշտպանության միջոցները:

Օրենքը: 35-րդ հոդված 1-ին մաս: Բացակայում է կասկածելու որևէ պատճառ, որ անցումային դրույթների ներքո դիմումատուն ուներ ներպետական դատարաններ հայց ներկայացնելու իրավունք: Ակտը ընդունվել էր կարգավորելու ներպետական դատավարությունների չափազանց երկար տևողության հարցը՝ հաշվի առնելով Կոնվենցիայի պահանջները: Մասնավորապես, փոխհատուցումը պետք է սահմանվի գործի առանձնահատուկ հանգամանքներով, ուշացումների տևողությամբ և դիմումատուի համար առաջացած հետևանքներով: Ի վերջո, փոխհատուցումը պետք է շնորհվի անկախ սխալի հաստատումից: Զնայած ակտը ուժի մեջ մտնելուց հետո մի քանի ամսվա ընթացքում ներպետական դատարանների կողմից կայացած պրակտիկայի անբավարար լինելուն՝ ներկա պահին չկար որևէ պատճառ կարծելու, որ նոր իրավական պաշտպանության միջոցը հնարավորություն չի տա համարժեք և բավարար փոխհատուցում ստանալու համար կամ չի առաջարկի հաջողության հիմնավորված հեռանկար: Զնայած միայն բացարիկ հանգամանքներում դիմումատուններից պահանջվում էր սպառել ներպետական իրավական պաշտպանության միջոցները իրենց դիմումները Եվրոպական դատարանին ներկայացնելու պահից հետո՝ նման հանգամանքները առկա էին սույն գործում. փոխհատուցման ներպետական իրավական պաշտպանության միջոցի սահմանումը

¹ *Rumpf v. Germany* թիվ 46344-06, 2010թ-ի սեպտեմբերի 2-ի թիվ 133 նախադեպային տեղեկատվություն:



հատկապես կարևոր դարձրեց առաջնային դիմումների համար և առանց ուշացումների ներպետական իշխանությունների կողմից, ինչպես նաև անցումային դրույթի գույությունը ցույց տվեց օրենսդրի նպատակը ներպետական մակարդակով փոխառուցում տալ նրանց, ում դիմումները արդեն գտնվում էին Դատարանի վարույթում: Այդ դիրքորոշումը կարող է հետագայում վերանայման առարկա լինել՝ կախված, մասնավորապես, ներպետական դատարանների իրավասությունից համապատասխան դատական նախադեպ սահմանելու Կոնվենցիայի պահանջներին համապատասխանող ակտով: Դիմումատուից, հետևաբար, պահանջվեց կիրառել ներպետական նոր իրավական պաշտպանության միջոցը:

Եզրակացություն՝ անընդունելի է (ներպետական իրավական պաշտպանության միջոցների չսպառում):

(Տե՛ս նաև *Garcia Cancio v. Germany* (որոշում) թիվ 19488/09, 2012թ-ի մայիսի 29):

Վեցամսյա ժամկետ

Վեցամսյա ժամկետից ելնելով իրար չհաջորդող մինչդատական կալանքի ժամկետների հանդեպ առանձնացված մոտեցում

Idalov v. Russia

Գանգատ թիվ 5826/03
Վճիռ 22.5.2012 [Մեծ պալատ]

Փաստերը: Դիմումատուին ծերբակալել էին առևանգում կատարելու կասկածանքով և

մինչդատական կալանք էին նշանակել, իսկ 1999թ-ին մեղադրանք էին առաջադրել: Նրա կալանքը հետագայում հետաձգվել էր մի շարք պատճառներով, իսկ 2001թ-ի հունիսին նրան կալանքից գրավով ազատում են: Ավելի ուշ՝ 2002թ-ի հոկտեմբերին, իրավասու դատարանը չեղյալ ճանաչեց գրավը և կարգադրեց վերսկսել դիմումատուի կալանքը: Նրա կալանքը բազմիցս երկարաձգվել էր, և 2003թ-ի նոյեմբերին նրան մեղավոր են ճանաչել և երկարաժամկետ ազատազրկման դատապարտեցին:

Օրենքը: 5-րդ հոդվածի 3-րդ մաս: Դիմումատուն բողոքեց, որ իր մինչդատական կալանքը չափազանց երկարատև էր և հիմնված չէր հիմնավոր և բավարար պատճառների վրա:

(ա) **Ընդունելիությունը:** Մոտավորապես երկու տարի կալանավորված լինելով՝ դիմումատուն ազատվեց կալանքից և մոտավորապես մեկ տարի և չորս ամիս գտնվում էր ազատության մեջ մինչ կրկին անգամ ծերբակալվեց և կալանավորվեց մեկ տարի և մեկ ամիս ժամկետով: Պարզելով, որ նա ներկայացրել էր իր դիմումը առաջին կալանքի ժամկետը լրանալուց ավելի քան վեց ամիս հետո, հարց առաջացավ, թե արդյոք դիմումատուի մինչդատական կալանքի իրար չհաջորդող երկու ժամկետները պետք է գնահատվեն ընդհանուր կամ արդյոք իր ազատվելը մինչդատական վարույթում զգալի ժամանակով ունեցել է Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին մասում վկայակոչված առաջին կալանավորման ժամկետի վերաբերյալ վեցամսյա ժամկետի սկիզբ է եղել:

Մինչդատական կալանքի իրար չհաջորդող բազմաթիվ ժամկետների մասին դիմումի վեց



ամսյա կանոնի վերաբերյալ Դատարանի նախադեպերը մինչ այժմ տարբերվում էին՝ ունենալով երկու առանձին պատճառաբանություններ: *Neumeister v. Austria* (թիվ 1936/63, 1968թ-ի հունիսի 27) գործում կիրառված մոտեցման համաձայն՝ չնայած որ վեց ամսյա ժամկետը խոչընդոտում էր եզրակացնելու, թե արդյոք կալանքի առաջին ժամկետի երկարությունը եղել էր հիմնավորված, այդ ժամկետը պետք է հաշվի առնվի երկրորդ ժամկետի հիմնավորվածությունը գնահատելիս: Եվ դրան հակառակ՝ համաձայն հետազայում *Kemmache v. France* (թիվ 1 և թիվ 2) (թիվ 12325/86 և թիվ 14992/89, 1991թ-ի նոյեմբերի 27) գործով կիրառված ընդհանուր մոտեցման, համաձայն որի մեղադրյալը մինչդատական վարույթի ընթացքում կալանավորվել էր երկու կամ ավելի առանձին ժամկետներով, ողջամիտ ժամկետի երաշխավորությունը պահանջում էր գումարվող ժամկետի ընդհանուր գնահատումը, այլ ոչ վեցամյա կանոնի կիրառելիության հարցի ուսումնասիրումը: *Neumeister* - ի մոտեցման վերջին անդրադարձից հետո Դատարանը համարեց այն կարևոր՝ վերը նշված մոտեցումները համապատասխանեցնելու համար, և ընդունեց միատեսակ ու կանխատեսելի մոտեցում, որպեսզի արդարադատության պահանջները ավելի լավ կատարվեն: Դատարանը, հետևաբար, որոշեց, որ, քանի որ մեղադրյալի մինչդատական կալանքը բաժանված էր իրար չհաջորդող մի քանի ժամկետի, նման ժամկետները ոչ թե պետք է գնահատվեն ընդհանուր, այլ առանձին: Ազատվելու պահից ի վեր դիմումատուն պարտավոր էր որևէ բողոք ներկայացնել, որը նա կարող է բերել մինչդատական կալանքի վերաբերյալ

փաստացի ազատվելու օրվանից վեց ամսվա ընթացքում: Սակայն, քանի որ տարբեր ժամկետները կազմում են նոյն քրեական դատավարության մաս, այն փաստը, որ դիմումատուն նախապես գտնվել է մինչդատական կալանքում, կարող է հաշվի առնվել: Դատարանը համարեց, որ այս մոտեցումը հստակորեն հարգում է պայմանավորվող կողմերի *vis-à-vis* վեցամյա կանոնի նպատակը, միաժամանակ թույլատրելով նրան հաշվի առնել դիմումատուի ազատազրկման մեջ գտվելու ցանկացած նախորդ ժամկետները: Սա նաև կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված «ողջամիտ ժամկետի» պահանջի վերաբերյալ բողոքների ուսումնասիրությանը հաջորդող պրակտիկա էր, և այն ներպետական մակարդակով քրեական դատաքննության ավելի արագ կատարմանը աջակցելու մեջ ավելի մեծ օգուտ ուներ: Սույն գործում դիմումատուի մինչդատական կալանքը բաժանված էր իրար չհաջորդող երկու ժամկետների: Հաշվի առնելով վերոնշյալը՝ վեց ամսյա կանոնը պետք է կիրառվեր առանձին յուրաքանչյուր մինչդատական կալանքի ժամկետի համար: Առաջին կալանքի ժամկետի վերաբերյալ դիմումատուի բողոքը պետք է ճանաչվի անընդունելի՝ ժամկետանց լինելու պատճառով: Սակայն, այն ժամանակը, երբ նա արդեն իսկ անցկացրել էր ազատազրկման մեջ նոյն քրեական դատավարության համատեքստում, պետք է հաշվի առնվեր իր հաջորդող մինչդատական կալանքի ժամկետը արդարացնող հիմքերի հիմնավորվածությունը և բավարարությունը գնահատելիս: Դիմումատուի բողոքը իր կալանքի երկրորդ ժամկետի վերաբերյալ ակնհայտորեն անհիմն չէր:



Եզրակացություն՝ մասնակի անընդունելի (միաձայն):

(բ) **Ըստ էության քննությունը –** Դիմումատուի մինչդատական կալանքի ժամկետը, որը պետք է հաշվի առնվեր, տևել էր մոտավորապես մեկ տարի և մեկ ամիս: Ներպետական իշխանությունները երկարացրել էին նրա կալանքը «հիմնավոր», բայց ոչ «բավարար» հիմքերով դրա տևողությունը արդարացնելու համար:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

Դատարանը նաև միաձայն որոշեց, որ առկա էր 3-րդ հոդվածի խախտում դիմումատուի՝ կալանքի և բանտից դատարան տեղափոխման պայմանների մասով, առկա էր 5§4 հոդվածի խախտում իր մինչդատական կալանքի որոշումների դեմ նրա վերաքննիչ բողոքների արագ չուսումնասիրման և վերաքննիչ դատական նիստերին նրա բացակայության համար, առկա էր Կոնվենցիայի 6§§ 1 և 3 (գ) և (դ) հոդվածի խախտում դատարանի դահլիճից նրան հեռացնելուց հետո անարդար դատաքննության համար, առկա չէր 6§1 հոդվածի խախտում նրա դեմ քրեական դատավարության տևողության համար, և 8-րդ հոդվածի խախտում բանտի դեկավարության կողմից Դատարանից դիմումատուին հասեագրված երկու նամակների բացման համար:

Հոդված 41: 7,150 եվրո որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

Ներկայացուցչի լիազորագիրը
Ներկայացնելու համար Դատարանի կողմից
սահմանված ժամկետները դիմումատուի
կողմից չպահպանելը անընդունելի է


Kaur v. the Netherlands

Գանգատ թիվ 35864/11

Որոշում 15.5.2012 [III բաժանմունք]

Փաստեր: Դատարանի Կանոնակարգի 47§5 Կանոնի համաձայն դիմումը համարվում է պատշաճ ներկայացված դիմումատուի կողմից դիմումի առարկան ամրագրող առաջին նամակը ստանալու օրը, եթե պատշաճ կերպով լրացված դիմումի ձևը ներկայացված լինի Դատարանի կողմից սահմանված ժամկետներում: Սույն գործում 2011թ-ի մայիսի 27-ին դիմումատուի ներկայացուցիչը Դատարան ուղարկեց դիմումի ստորագրված թղթային պատճեն և կից ներկայացված փաստաթղթերը, բայց առանց կցելու լիազորագիրը: Դատարանը հետագայում նրան երկու հիշեցումներ ուղարկեց՝ տեղեկացնելով, որ լիազորագիրը Դատարանին չուղարկելը մինչև նշանակված օրը, կարող է հանգեցնել դիմումի անընդունելի ճանաչելուն: Ներկայացուցիչը չի պահպանել վերջնաժամկետը և ներկայացրել է լիազորագիրը միայն 2011թ-ի դեկտեմբերի 22-ին՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վեց ամսյա ժամկետը լրանալուց մոտ երեք ամիս անց: Ուշացման համար որևէ բացատրություն չէր տրվել:

Օրենքը: 35§1: Նոյնիսկ Դատարանի Կանոնակարգի 47§1 Կանոնի ներքո անհրաժեշտ բոլոր տվյալները և փաստաթղթերը պարունակող դիմումը չէր



կարող այլևս համարվել ճիշտ ժամանակին ներկայացված, եթե լիազորագիրը ներկայացվել է գգալիորեն ավելի ուշ, քան այն ներկայացնելու համար սահմանված ժամկետի ավարտը:

Նման մոտեցման կիրառումը Դատարանը բացատրեց մի շարք գործերով իր կայացրած որոշմամբ, որ ներկայացուցիչների համար էական էր ցուց տալ, որ նրանք ստացել էին հատուկ և պարզ ձևակերպված ցուցումներ այն անձի կողմից, ում անունից գործելու էին, քանի որ դիմումատուն Դատարանի հետ ուղիղ կապի մեջ չէր: Եթե չներկայացվի փաստաթուղթ, որով դիմումատուն ցանկանում է, որպեսզի ներկայացուցիչը Դատարան դիմում ներկայացնի իր անունից՝ դիմումը կմերժվի «դիմումատուի» ցանկությամբ: Բացի այդ, դա կիակասի վեց ամսյա ժամկետի կանոնի նպատակին, եթե Կոնվենցիայի խախտման վերաբերյալ քննությունը կարող է սկսվել ենթադրյալ դիմումատուների անունից, ով Դատարան անհասկանալի և անսահմանափակ ժամանակահատվածում իրենց անունից ներկայացված միջնորդությամբ չէր հաստատել այդ քննության համար իրենց ցանկությունը: Հետևաբար, չի կարելի ակնկալել, որ Դատարանը չէր կարող ըստ էության ուսումնասիրել գործը, որում լիազորագիր ներկայացնելու նպատակով սահմանված ժամկետները գերազանցվել էին առանց ժամկետի երկարացմանդիմումի կամ ուշ ներկայացնելու բացատրության:

Սույն գործում դիմումը աետք է ներկայացված լիներ ամենաուշը մինչև 2011թ-ի սեպտեմբերի 25-ը: Չնայած դիմումի ստորագրված թղթային պատճեն և հիմնավորող փաստաթղթերը ներկայացվել էին 2011թ-ի մայիսի 27-ին՝ պատշաճ կերպով ստորագրված և լրացված

լիազորագիրը չէր ստացվել մինչև 2011թ-ի դեկտեմբերի 22-ը, չնայած այն փաստին, որ երկու հիշեցումներ էին ուղարկվել ներկայացուցչին՝ հստակ նախազգուշացնելով, որ սահմանված ժամկետներում լիազորագիրը չներկայացնելը կարող է հանգեցնել դիմումը անընդունելի համարելուն: Հետևաբար, վերջին օրը պետք է համարվեր որպես դիմումը ներկայացնելու օր՝ համաձայն 47§5 Կանոնի, և դիմումը ժամկետանց էր:

Եզրակացություն՝ անընդունելի է (ժամկետանց):


3-րդ հոդվածի ներքո արտաքսման գործերով վեցամսյա ժամկետի հաշվարկման սկիզբը

P.Z. and Others v. Sweden

Գանգատ թիվ 68194/10

Որոշում 29.5.2012թ. [Վ Բաժանմունք]

Փաստեր: Դիմումատուները ավղան քաղաքացիներ են 2007թ. ժամանում են Շվեդիա և օթևանի համար դիմում ներկայացնում: Փախստականների դատարանի կողմից կայացված որոշմամբ նրանց դիմումը մերժվում է: 2008թ. սեպտեմբերին Փախստականների Վերաքննիչ դատարանը մերժում է նրանց բողոքը: Սակայն դիմումատուները մնացին Շվեդիայում և 2010թ. նոյեմբերին դիմում ներկայացրին Եվրոպական Դատարան, որտեղ նրանք վիճարկում էին, որ իրենք կենթարկվեն անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի վտանգի, եթե նրանց արտաքսեն Աֆղանստան: Շվեդական



Կառավարությունը նախնական առարկության մեջ նշել է, որ դիմումատուների հայցը ժամկետանց է ներկայացվել, քանի որ Կոնվենցիայի 35§1 հոդվածի համաձայն, դիմումը պետք է ներկայացվեր Փախստականների Վերաքննիչ դատարանի 2008թ. սեպտեմբերին կայացված հայցը մերժելու վերաբերյալ որոշումից հետո վեց ամսվա ընթացքում:

Օրենք: 35§1 հոդված: Վեցամսյա ժամկետը հաշվարկելու սկիզբը սկսվում էր արդյունավետ ներպետական իրավական պաշտպանության միջոց ապահովող ներպետական վերջնական որոշումից հետո: Որպես կանոն, համաձայն Կոնվենցիայի 3-րդ հոդվածի՝ ուղարկող Պետության պատասխանատվությունն առաջանում է միայն այն ժամանակ, երբ միջոցներ են ձեռք առնվում գործով անձին իր բնակվելու տարածքից տեղափոխելու համար: Այն պայմանները, որոնք վերաբերում են ուղարկող պետության պատասխանատվության համապատասխան օրը որոշելուն, կիրառվում են նաև վեցամսյա ժամկետի կանոնի դեպքում: <Ենտերար, համաձայն 3-րդ հոդվածի՝ պետության պատասխանատվության օրը համապատասխանում է այն օրվան, երբ դիմումատուի համար սկսվում է հոսել վեցամսյա ժամկետը, որպեսզի երբ տեղափոխման հրամանի վերաբերյալ որոշումը դեռ չի գործադրվել և երբ անհատը դեռ տվյալ Պետության տարածքում է: Սույն գործում, չնայած դիմումը Դատարան ներյակայացվել է ներպետական վերջնական որոշումից ավելի քան երկու տարի հետո, արտաքսման հրամանը դեռ չէր գործադրվել և դիմումատուները գտնվում էին Շվեյցարիայում:

Այդպիսով վեցամսյա ժամկետը դեռ չէր սկսել հոսել:

Եզրակացություն՝ նախնական առարկությունը մերժվել է (միաձայն):

(Տե՛ս նաև *B.Z. v. Sweden* (որոշում), թիվ 74352/11, 29 մայիս 2012թ.):

ՀՈՂՎԱԾ 46

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՋՈԳԱՌՈՒՄՆԵՐ

Պատասխանող Պետությունից
պահանջվում է անհապաղ բարեփոխումներ իրականացնել, որպեսզի վերացնի ոստիկանության կողմից ցուցաբերած վատ վերաբերմունքը և երաշխավորի ոստիկանության կողիտ վերաբերմունքի մասին գանգատների արդյունավետ հետաքննությունը:

Kaverzin v. Ukraine

Գանգատ թիվ 23893/03

Վճիռ 15.5.2012 [Վ Բաժանմունք]

Փաստերը: 2003թ. Դիմումատուին դատապարտում են ցմահ ազատազրկման դաժան սպանություն գործելու համար և նրան պահում են բարձր անվտանգություն ունեցող բանտում: Դիմումատուն իր՝ Եվրոպական Դատարան ներկայացրած դիմումում գանգատվել է, որ ոստիկանությունը իրեն ենթարկել է վատ վերաբերմունքի իր ազատազրկման ընթացքում և ազատազրկումից հետո: <Հիվանդանոցի մասնագետը դիմումատուին քննում է ազատազրկումից հետո հաջորդ օրը և գտնում է կրծքավանդակի, մեջքի ներքսի մասի, երիկամների, դեմքի և գլխի հետևի մասի վնասներ: Մի շաբաթ անց նոր բժշկական



զննություն է անցկացվում, որի արդյունքում արձանագրվում է ակնագնդի արևահոսություն, ինչպես նաև կրծքավանդակի, ձեռքերի և ոտքերի կապտուկներ ու քերծվածքներ, որոնցից մի քանիսը պատճառվել էին զննումից չորս օր առաջ: Ավելի ուշ, դիմումատուն բողոքում է, որ ոստիկանությունը իր խոշտանգման վերաբերյալ գանգատների ուղղությամբ չի իրականացրել արդյունավետ հետաքննություն, և որ բժշկական օգնության բացակայության հետևանքով իր աչքի վնասը հասցրել է իր տեսողության կորստի, և, բացի այն որ նա հինգ տարի կույր է եղել և ամենօրյա խնամքի կարիք է ունեցել, նրան անընդհատ ձեռնաշղթաներ են հագցրել, ձեռքերը ետևում պահած՝ ամեն անգամ բանտի խուցը լրելուց:

3-րդ հոդված

(ա) **Խոշտանգում:** Բժշկական և այլ առկա ապացույցների արդյունքում Դատարանը համարել է, որ ոստիկանությունը ամբողջովին պատասխանատու է եղել դիմումատուի կրած վնասների համար: Հաշվի առնելով վնասների ծանրության աստիճանը և այն փաստը, որ դրանք դիտավորյալ են պատճառվել՝ դիմումատուի նկատմամբ դրսորած վատ վերաբերմունքը ուստիկանության կալանավայրում պետք է դասակարգվի որպես խոշտանգում:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

(բ) **Խոշտանգման վերաբերյալ գանգապների ուղղությամբ հետաքննություն:** Զնայած դատախազը ավարտին է հասցրել դիմումատուի վնասների մասին մասին կարծիքը առաջարկուելու ժամանակահատվածում:


Ժամանակահատվածում, բայց նրա եզրականգումները անորոշ էին և շփոթեցնող և նա որևէ փորձ չի արել դիտարկելու ձերբակալման ժամանակ ուժի գործադրման օրինականությունը կամ համաշափությունը, կամ ձերբակալումից հետո խոշտանգման վերաբերյալ գանգատները: Փոխարենը՝ նա հիմնվել է դիմումատուի նախնական հայտարարության վրա, որով դիմումատուն հերքել է վատ վերաբերմունքը, արհամարիելով ավելի ուշ կատարված հայտարարությունը, որը ի հակասումն նախորդի՝ հակառակ պնդումներ էր բովանդակում: Այն դատարանները, որոնք քննել են դիմումատուի քրեական գործը, չեն անդրադարձել դիմումատուի պնդումներին, որ իր ցուցմունքները ճնշման տակ են վերցրել: Այսպիսով, Ուկրաինայի պետական մարմինները դիմումատուի խոշտանգման վերաբերյալ գանգատների կապակցությամբ պատշաճ հետաքննություն չեն իրականացրել:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

(գ) **Բժշկական խնամք:** Զնայած այն վնասը, որի արդյունքում դիմումատուն կորցրել է տեսողությունը, կրել 2001թ. հունվարին, դիմումատուն մինչև 2001թ. սեպտեմբերը որևէ բուժում չի ստացել: Այսպիսով, պետական մարմինները դիմումատուին պատշաճ բժշկական օգնություն չեն տրամադրել այդ ընթացքում: Դրանից հետո բժշկական խնամքը պատշաճ է եղել:

Եզրակացություն՝ խախտում 2001թ. սեպտեմբերի ընթացքում (միաձայն):

(դ) **Ձեռնաշղթա հագնելլը:** Զնայած դիմումատուի գործի քրեական




արձանագրումն և որակումը որպես առանձնապես վտանգավոր կարող էին հանգեցնել, որ դիմումատուն պահվեր բարձր անվտանգությունապահովող վայրում, որևէ հիմք չկար Ենթադրելու, որ դիմումատուն փորձել է փախչել կամ որ նա նախնական կալանքի, ինչպես նաև դրանից հետո ընկած ժամանակահատվածում իրեն վայրագ է պահել: Նրան ձեռնաշղթա հազցնելը, հատկապես ձեռքերը հետևում պահած, հաշվի առնելով այն, որ նա ամբողջապես կոյու է եղել և օգնության կարիք է ունեցել, պետք է հետևաբար իրեն տանջանք պատճառեր և նվաստացներ, որը վեր էր գտնվում օրինական պատժի սահմաններից և առաջացնում էր անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունք:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

46-րդ հոդված: Ոստիկանության կալանավայրում դիմումատուի նկատմամբ վատ վերաբերմունքը Ուկրաինայում կրկնվող երևույթ է: Դատարանը վատ վերաբերմունքի վերաբերյալ գանգատների մասով ավելի քան քառասուն գործերով (և ավելի քան հարյուր գործ էլ դեռ գտնվում են Դատարանի քննության ներքո) ուկրաինական պետական մարմիններին արդեն պատասխանատու համարել է, այն բանի համար, որ նրանք ոստիկանության կալանավայրում անձանց վատ վերաբերմունքի են Ենթարկում և որ նրանք արդյունավետ հետաքրքր գործություն չեն հրականացնում:

Քրեական գործով կասկածյալները ամենախոցելի խումբն են համարվում, որոնք ոստիկանությունում Ենթարկվում են վատ վերաբերմունքի: Այսպիսի վատ վերաբերմունքը հիմնականում դրսւորվում է

կալանքի առաջին օրերին, երբ կասկածյալները դեռ փաստաբան չեն ունենում և երբ նրանց վնասները պատշաճորեն դեռ չեն արձանագրվում: Յուրաքանչյուր գործի որևէ փաստի, գոհերին վատ վերաբերմունքի Ենթարկելու և պետական մարմինների կողմից քրեական ապացույց հավաքելու նպատակի մեջ որևէ կապ չկա: Երբ արդեն որոշ ավարտված գործերի շրջանակներում գնահատում ենք ոստիկանության աշխատանքին ավելանում է նաև դատախազության կողմից հիմնավոր և արագ գործողություններ իրականացնելու դժկամությունը, որպեսզի համապատասխան փաստեր ու ապացույցներ հավաքնեն: Երբ դատախազները պահանջներ են ներկայացրել, նրանք հազվադեպ են ոստիկանության աշխատակիցներից բացատրություններ պահանջել և ոչինչ չեն արել, որ ստուգեն դրանց ճշմարտացիությունը: Դատախազների նման դժկամությունը ինչ որ չափով կարող է բացատրվել քրեական գործողություններում իրենց վիճելի հանձնարարություններով, Պետության անունից դատախազական գործողություններ իրականացնելով և նախաքննության օրինականության վերահսկողությամբ: Դատախազների դեմ վերաքննիչ բողոքները այն հիմքով, որ դատախազները մերժել են հետաքրքր իրականացնել, դատախազների հրամանների բարելավման վերաբերյալ որևէ առաջընթացի չի հանգեցրել: Առաջին ատյանի դատարանները պահանջների վերաբերելիության մասով, որոնք ձեռք են բերվել սպառնալիքի ճանապարհով, հազվադեպ են անհատական գնահատական տվել, եթե այդ վեճերը դատախազների



կողմից մերժվել են: Ուկրաինայի դեմ նախկին գործերի նման, որտեղ Դատարանը 3-րդ հոդվածի մասով դատավարական խախտում է ճանաչել, դիմումատուի գործը նոյնպես ցուց է տալիս, որ Պետական մարմինները, որոնք պատասխանատու են վատ վերաբերմունքի համար, անպատճ են մնացել, որով երկարաձգել են անպատճելիության ամբողջ ընույթը:

Այս իրավիճակն առաջացել է պարբերական խնդիրների հետևանքով, որոնք անմիջական համապարփակ և բազմակողմանի միջոցառումների իրականացման կարիք ունեն: Մինչդեռ ընդհանուր և անհատական միջոցառումների իրականացման հանձնարությունը ընկել է Նախարարների Կոմիտեի վրա, Դատարանը անհրաժեշտ է համարել նշել, որ Ուկրաինան պետք է շատ շտապ բարելավի իր իրավական համակարգը, որպեսզի երաշխավորի կալանավայրերում վատ վերաբերմունքի վերացումը, 3-րդ հոդվածին համապատասխան արդյունավետ հետաքննության իրականացումը ամեն գործում, որտեղ վատ վերաբերմունքի մասին վիճելի գանգատ է բարձրացվել և հետաքննության բոլոր թերությունները արդյունավետ կերպով փախհատուցվում են ներաբետական իրավական համակարգի միջոցով: Այսպիսով, Ուկրաինական մարմինները պետք է մեծ ուշադրություն դարձնեն ներկայիս վճռին քննարկվող խնդիրի մասով և Դատարանի նախադեպին, Նախարարների Կոմիտեի հանձնարականներին, բանաձևերին և որոշումներին:

41-րդ հոդված. 40,000 եվրո որպես ոչ նյութական վնաս:

Թիվ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՀՈՂՎԱԾ

Պողիտիվ պարտավորություններ

Ուժեղ անձրևից հետո առաջացած ջրհեղեղից սեփականությանը պատճառված վնաս՝ անընդունելի


Hadzhiyska v. Bulgaria

Գանգատ թիվ 20701/09

Որոշում 15.5.2012 [IV Բաժանմունք]

Փաստեր: Դիմումատուի տունը հեղեղվել էր ջրով, երբ ուժեղ անձրևից հետո գետը դուրս էր եկել իր հուներից: Դիմումատուն վնասների հատուցման բողոք է ներկայացնում Բնապահպանության և Զրերի Նախարարություն և մարզպետին՝ բողոքելով, որ նրանք չեն մաքրել գետի ափերը, չեն կառուցել պաշտպանական հարմարանքներ և չեն տեղադրել նախագործացնող համակարգ: Վարչական դատարանները մերժում են դիմումատուի պահանջը:

Օրենք: Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդված: Դիմումատուի սեփականությունը վնասվել էր ուժեղ անձրևի հետևանքով՝ ոչ մարդածին գործողությունների հետևանքով: Դիմումատուն ո՛չ վիճարկել էր այն փաստը, որ պետական մարմինները կարող էին կանխատեսել կամ կանխել անձրևի հետևանքները, ո՛չ էլ ներկայացրել է ջրհեղեղի մակարդակը: Հայտնի չէ, թե իր առաջարկած միջոցները կարող էին կանխել կամ մեղմացնել այն ջրհեղեղի պատճառած վնասը, որը պատճառվել էր իր սեխականությանը կամ այլ կերպ ասած՝ թե արդյոք դիմումատուի կրած վնասը կարող էր



ամբողջապես կամ մասամբ վերագրվել Պետության անփոփոքանը: Փաստորեն շրիեղեղները լուրջ վնաս չեն պատճառել դիմումատուի տանը կամ կյանքի համար վտանգ չեն ներկայացրել և պետական մարմինների անգործության և սեփականությանը պատճառած վնասի միջև որևէ պատճառահետևանքային կապ չի սահմանվել: Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը չի պահանջում Կողմ Պետությանը կանխարգելիչ միջոցներ ձեռնարկել, որպեսզի անհատական սեփականությունը պաշտպանի բոլոր այն իրավիճակներում կամ պաշտպանի բոլոր այն տարածքները, որոնք կարող են շրիեղեղի կամ բնական աղետի ենթարկվել: Հաշվի առնելով առաջնայնության առումով ձեռնարկվող միջոցառումները, յուրաքանչյուր պարտավորություն, որը ծագում է այդ դրույթից, պետք է մեկնաբանել այն տեսանկյունից, որը պետական մարմինների համար չէր առաջացնի անհնարին կամ անդառնալի հետևանքներ: Այսպիսով դիմումատուն թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի առումով չի ներկայացրել որևէ վիճելի փաստ:

Եզրակացություն՝ անընդունելի (անհիմն):

Գույքը

Գումարի վերադարձ, որը առանց որևէ թույլտվության դեպոզիտացվել է Մոզամբիկի անկախության առթիվ պորտուգալական հյուպատոսարանում ինֆլացիայի կամ դրամի արժեզրկման պատճառով՝ խախտում չկա:


Flores Cardoso v. Portugal

Գանգատ թիվ 2489/09

Վճիռ 29.5.2012 [Բաժանմունք II]

Փաստերը: Գործը վերաբերում է Պետության կողմից գումարի վերադարձին, որը դիմումատուն դեպոզիտացրել է Մոզամբիկի Պորտուգալական հյուպատոսարանում, երբ Քաղաքացիական պատերազմը ծագելուց հետո 1976թ. լրել է նախկին պորտուգալական գաղութը: Ակնհայտորեն նմանատիպ իրավիճակում են եղել նաև այլ 3000 անձիք: Դիմումատունները բողոքել են, որ գումարները իրենց վերադարձնելիս՝ դրամի արժեզրկումը կամ ինֆլացիան չեն հաշվարկել: Փոխհատուցման վերաբերյալ գանգատները մերժվել են:

Օրենքը: Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդված: Այն գումարը, որը դիմումատուն դեպոզիտացրել է հյուպատոսարանում թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով համարվում է «սեփականություն»: Դատարանի նախադեպի համաձայն այս հոդվածից չի ենթարկվում, որ Պետությունը ընդհանուր պարտավորություն է ունեցել պարբերական ինդեքսավորման միջոցով ձեռք բերելու գումարների վաճառքի արժեքը, որոնք դեպոզիտացվել են բանկերում կամ այլ ֆինանսական հաստատություններում: Նոյն պատճառաբանությունը կիրառվել է, *a fortiori*, այն գումարների նկատմամբ, որոնք դեպոզիտացվել են ոչ ֆինանսական հաստատություններում՝ ինչպես սույն գործում: Քննարկվող գումարի փոխանցումը հյուպատոսարան չի կարող համարվել շահավետ դեպոզիտ, ավելին՝ կողմերը գումարի տոկոսներով չեն հետաքրքրվել: Գումարը վճարելիս դրա փոփոխման արժեքային սկզբունքը կարող էր սահմանել ինֆլացիային և արժեզրկմանը



համապատասխան դիմումատուների և դեպոզիտարի միջև հատուկ համաձայնության միջոցով, միայն համաձայն սահմանված ներպետական օրենքի: Ըստ ներպետական օրենքի՝ դիմումատուներն իրավունք ունեն միայն ստանալու քննարկվող գումարի միայն նոմինալ արժեքը: «Օրինական սպասելիքը» կարող էր միայն վերածվել «սեփականության», այն դեպքում եթե ներպետական օրենքում լիներ բավարար հիմք: Ինչնեւ, ո՞չ ներպետական օրենքը, ո՞չ էլ ներպետական դատարանների որոշումները երբեմն դիմումատուի համար չեն սահմանել որևէ կիրառելի տոկոս: Չնայած դիմումատուները իրավունք ունեն ետ ստանալու քննարկվող գումարի նոմինալ արժեքը, որի պարտավորությունը Կառավարությունը կատարել է, բայց նրանք իրավունք չունեն պահանջելու գումարի որևէ բարելավում: Այսպիսով, դիմումատուների գումարի բարելավումը չէր կարող համարվել «սեփականություն»:

Եզրակացություն՝ խախտում չկա (հինգ ծայն՝ ընդդեմ երկուահի):

Դատարանը նաև համարեց միաձայն, որ տեղի է ունեցել 6Տ1 հոդվածի խախտում:

41-րդ հոդված՝ 2,600 եվրո որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

Թիվ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 3-ՐԴ ՀՈՂՎԱԾ

Քվեարկություն

Բանտարկյալների ընտրելու իրավունքի արգելում, որը ազատազրկման արդյունք է՝ խախտում չկա


Scoppola v. Italy (no. 3)

Գանգատ թիվ 126/05

Վճիռ 22.5.2012 [ՄՊ]

Փաստերը: 2002թ. Երդվյալների դատարանը դիմումատուին ցմահ ազատազրկում է նշանակել սպանության համար, դիտավորյալ սպանության, իր ընտանիքի անդամների նկատմամբ վատ վերաբերմունքի և անօրինական իրազեն պահելու համար: Ըստ իտալական օրենսդրության՝ դիմումատուի ցմահ ազատազրկումն արգելում էր նրան ցմահ իրականացնել քաղաքացիական ծառայություն, որն իր հերթին նրան մշտապես գրկում էր քվեարկելու իրավունքից: Դիմումատուի արգելքի մասին վերաբնիչ բողոքները խափանվեցին: 2006թ. Վճարեկ դատարանը մերժում է վերաբնիչ բողոքը հիմնավորելով, որ քաղաքացիական իրավունքներից գրկումը կիրավունք է միայն հինգ տարուց մինչև ցմահ ազատազրկված բանտարկյալների նկատմամբ (այն դեպքերում, եթե ազատազրկումը նշանակված էր հինգ տարուց պակաս, քաղաքացիական իրավունքներից գրկումը տևում էր ընդամենը հինգ տարի): 2011թ. հունվարի 18-ի վճռում Դատարանի Պալատը միաձայն հայտարարեց, որ տեղի է ունեցել Թիվ 1 Արձանագրության 3-րդ հոդվածի խախտում (Տե՛ս նախադեպային տեղեկատու թիվ 137):


Օրենք: Թիվ 1 Արձանագրության 3-րդ հոդված: Գանգատի առարկա միջոցները հանդիսանում էին դիմումատուի ընտրելու իրավունքին միջամտություն: Այն հետապնդում էր քաղաքացիական



պատասխանատվության և օրենքի ուժի նկատմամբ հարգանքի,և պատշաճ գործելու ու ժողովրդավարական կարգի պահպանման օրինական նպատակներ: Ինչ վերաբերում է միջամտության համաշափությանը՝ Եվրոպայում դատապարտված անձանց հանդեպ սահմանափակումների քանակի քացման միտում, Դատարանը վերահաստատեց այն սկզբունքները, որոնք Մեծ Պալատը սահմանել է Հիրսթի վճռով (թիվ 2), մասնավորապես՝ այն փաստը, որ քաղաքացիական իրավունքից զրկելը ընդհանուր առմամբ շոշափում է մի խոյք անձանց շահերը, ապա մեխանիկորեն և անխտիր դա չի համապատասխանել Թիվ 1 Արձանագրության 3-րդ հոդվածին:

Ընտրելու իրավունքի արգելքը դատարանի կողմից սահմանվելու հարցի շուրջ Հիրսթի (թիվ 2) վճիռը որևէ հստակ բացատրություն չի տվել կապված դատավորի այլ էական հարցերի հետ քաղաքացիական իրավունքից զրկելու անհամաշափության միջոցները որոշելու հետ,: Մինչդեռ դատավորի միջամտությունը հստակորեն պետք է երաշխավորեր բանտարյալների ընտրելու իրավունքի համաշափության սահմանափակումը, որը հակասում է Ֆրոդ վճռով մոտեցմանը, որ նման սահմանափակումները անհրաժեշտորեն ավտոմատ, ընդհանուր, անորոշ կերպով չեն կատարվում, որովհետև դրանք դատավորի կողմից հրահանգված չեն եղել: Օրենքում պետք է մանրամասն զետեղվեն այն հանգամանքները, որոնց առկայությամբ ընտրելու իրավունքը սահմանափակվել է: Վերջինս դրա կիրառումը կդարձնի պայմանական՝ կախված որոշ փաստերից, օրինակ՝ կատարված հանցագործության ծանրության բնույթից: Մեկ ներպետական

իրավունքի համակարգի դատապարտված բանտարկյալների ընտրելու իրավունքի սահմանափակման ձևերը համեմատաբար տարբերվում մեկ ուրիշ համակարգից, մասնավորապես՝ կախված դատարանների կողմից դրա սահմանափակման անհրաժեշտությունից: Կողմ պետությունները ազատ էին մեղադրյալ բանտարկյալների ընտրելու իրավունքի սահմանափակման համաշափության միջոցի որոշումը թողնել դատարանների հայեցողությանը կամ իրենց օրենսդրության մեջ ներմուծել դրույթներ, որոնք կսահմանեն այն պայմանները, որտեղ էլ կիրառվեն նման միջոցները: Հետևյալ գործում օրենսդիրը պետք է հավասարակշռի մրցակցող առանձնահատկությունները, որպեսզի խուսափի որևէ ընդհանուր, ավտոմատ կամ անորոշ սահմանափակումից: Այդ հիմքով, ընտրելու իրավունքից զրկումը առանց *ad hoc* դատարանի որոշման, ինչպես որ սույն գործում, չի պարունակում 1-ին արձանագրության 3-րդ հոդվածի խախտում: Վիճարկված միջոցը պետք է նաև անհամաշափ համարվի օրինաշափ նպատակի հետ, այն պայմաններով և այն իրավական դաշտով, ինչպես որ կիրառվել է: Խտալական համակարգում այդ միջոցը կիրառվել է այն անհատների նկատմամբ որոնք դատապարտված են եղել որոշակի մեծ հանցագործությունների համար կամ այն անձանց նկատմամբ, որոնք ազատազրկվել են օրենքով նախատեսված որոշակի պայմաններով: Սա ցույց է տալիս, որ օրենսդիրը պետք է մտահոգվի, որպեսզի բարելավի որոշակի մասնավոր դեպքերի վերաբերյալ միջոցների կիրառումը: Օրենքը նաև բարելավել է նշանակված պատժի միջոցի կիրառման տևողությունը, և այդպիսով, անուղղակիորեն անդարադարձել



է հանցանքի ծանրության աստիճանին: Մի մեծ խումբ մեղադրյալ բանտարկյալներ իտալիայում պառամենտական ընտրություններում ընտրելու իրավունքից զրկված չեն եղել: Մեղադրյալ՝ ով զրկված է եղել իր ընտրելու իրավունքից նաև իրավունք ուներ վերականգնել իր իրավունքը: Սա ապացուցում է նաև, որ իտալական համակարգը ակնհայտորեն կոպիտ չի եղել և որ Պատասխանող Պետությունը այս պարագայում չի սահմանազանցել գնահատման չափանիշը: Այս պարագայում Դատարանը չի կարող համարել, որ իտալիայի օրենքով նախատեսված քաղաքացիական իրավունքից զրկելը ունեցել է ընդհանուր, ավտոմատ և անկողմնակալ բնույթ, որը Հիրսթիի վճռում (թիվ 2) առաջացրել է 1-ին արձանագրության 3-րդ հոդվածի խախտում:

Եզրակացություն՝ խախտում չկա (տասնվեց ձայն ընդդեմ մեկի)

(Տե՛ս Հիրսթն ընդդեմ Միացյալ Թագավորության (թիվ 2) [ՄՊ], թիվ 74025/01, 6 հոկտեմբեր 2005, Տեղեկատվական նոթեր, թիվ 79; և Ֆրոդին ընդդեմ Ավստրիայի, թիվ 202201/04, 8 ապրիլ 2010, Տեղեկատվական նոթեր, թիվ 129):

ԴԱՏԱՐԱՆԻ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եվրոպական նախադեպի մասին ծեռնարկ, որին քննարկվում են ապաստանի, գաղթի և սահմանի վերահսկման վերաբերյալ գործեր

Հիմնարար իրավունքների Եվրոպական Միության Գործակալությունը (ՀԻԳ) և Դատարանը համաձայնվել են իրականացնել մեկ այլ միացյալ նախագիծ, որի նպատակը ԵՄ Անդամ Պետություններին աջակցելն է որպեսզի նրանք կիրառեն ԵՄ օրենքը ապաստանի, գաղթի, սահմանի վերահսկման ոլորտում՝ վերհանելով հնարավոր սխստեմատիկ խնդիրներ և միևնույն ժամանակ աջակցել դատարվորներին, դատախազներին, իրավապահին մարմիններին վերապատրաստվելու համար, ինչը որ կատարում է Եվրոպայի խորհուրդը: Նախագիծը կամրապնդվի ծեռնարկում ընտրված լեզուներով, որոնք կընդգծեն և դիդակտիկ ձևով հակիրճ կներկայացնեն այս ոլորտում Եվրոպական իրավունքի հիմնական և դատավարական սկզբունքները: Դա պետք է ձևով նման լինի խորականությունը արգելելու մասին ծեռնարկին: Դրա հրատարակումը նախատեսվում է 2013թ. առաջին կեսին:

ՄԻՀԸ ՆԱԽԱԳԻԾ «ԿՈՆՎԵՆԺԻԱՅԻ ՉԱՓԻԱՆԻՀՆԵՐԸ ՄՈՎԵՑՆԵԼ ՊՐԱՆՅ. ՀԱՄԱՊԱՄԱՍԽԱՆ ԼԵզուներով ՄԻԵԴ ԿԱՐԱՆՈՐ ՆԱԽԱԴԵպի ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ և ՊԱՐԱՃՈՒՄ»

Եռամյա նախագիծն իրականացվում է Մարդու իրավունքների Հավատարմագրային Հիմնադրամի աջակցությամբ (www.coe.int/humanrightstrustfund):

Նախագիծը սկսվել է 2012թ. մայիսին և սկզբունքորեն վերաբերուի է հետևյալ Պետություններին՝ Ալբանիա, Հայաստան, Ադրբեյջան, Բունիա և Հերցոգովիան, Վրաստան, Մոլդովա, Մոնտենեգրո, Սերբիա,



«Նախկին Հարավսլավիայի Մակեդոնիայի Հանրապետություն», Թուրքիա և Ռուսաֆինա: Նախագծի նպատակը ՄԻԵԴ հիմնական չափանիշների հասկացության բարելավումն է և ներպետական իմպեմենտացումն է՝ կազմակերպելով Դատարանի նախադեպի կարևոր գործերի թարգմանությունը համապատասխան Պետության լեզուներով և դրանց տարածման երաշխավորումը Դատարանի տվյալների բազայի՝ HUDOC-ի միջոցով, ինչես նաև Եվրոպայի Խորհրդի տարբեր կազմակերպությունների և այլ գործող նախագծերի գործընկերների միջոցով, որոնք համապատասխան Պետությունում կազմակերպում են Կոնվենցիայի չափանիշների մասին վերապատրաստում:

Թարգմանվող նյութը կազմված կլինի գլխավոր գործերից (կամ նմուշներից կամ գործերի իրավական հակիրճ նկարագրություններից), որոնք Դատարանի իրավախորհրդատուն այս կամ այն Պետության համար կարևոր կիամարի: Ուշադիր կերպով կրասակարգվեն գործերի ընտրությունը և յուրաքանչյուր գործով համապատասխան լեզվի (ներ) ընտրությունը, որպեսզի տարածվի դրանց ազդեցությունը և նվազեցվի գործերի թարգմանությունների կոստակումը, որոնք հնարավոր է, որ արդեն դասակարգվել են կամ համապատասխան Պետության կողմից գտնվում են հստակեցման փուլում:

Քարտուղարությունը ճանապարհ է փնտրում կազմակերպությունների (համալսարաններ, դատական վերապատրաստման ակադեմիաներ, <Կ-ներ և այլն) հետ համագործակցելու համար, որոնք ներկայում գրադրում են ներպետական մակարդակում Դատական նախադեպի թարգմանությամբ:

Մասնավորապես, և որպեսզի հնարավոր լինի խուսափել կուտակումներից, Քարտուղարությունը ցանկություն է հայտնում տեղեկանալ յուրաքանչյուր գործից կամ դրանց հակիրճ նկարագրությունից, որոնք արդեն թարգմանվել են կամ առանձնացվել են, որպեսզի թարգմանվեն նման կազմակերպության կողմից: Ներպետական մակարդակի գործընկերներին նոյնպես կոչ է արվում այս նախագծի շրջանակներում թարգմանության համար գործեր առաջարկել: Քարտուղարությունը նաև փնտրում է նմանատիպ տեքստերի թարգմանության փորձառու թարգմանիչների կամ փաստաբանների (անգլերենից կամ ֆրանսերենից մեկ կամ մի քանի համապատասխան լեզվի թարգմանություն): Ընտրությունից հետո կսահմանվի թարգմանությունների ցուցակը: Ապագա գործընկերները և իրավական թարգմանիչները կարող են կապնվել Նախադեպի Տեղեկատվության և Հրատարակությունների Բաժին հետևյալ հասցեով՝ publishing@echr.coe.int:

